



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Նախ Կասեցնել Արտագաղթը

Հայաստանի ցուրտ խորհրդարանի անդրանիկ միատի ընթացքին ելոյթ ունենալով, նախագահ Սերժ Սարգսեան դարձեալ խօսեցաւ տարբեր ոլորտներու մէջ քաղաքական, ընկերային, տնտեսական բարեփոխումներ իրականացնելու մասին, որոնց շնորհիւ՝ մինչեւ 2040 թուականը երկրէն ներս աղքատութեան մակարդակը պիտի նուազի՝ հասնելով 7-8 տոկոսի ու Հայաստանի բնակչութիւնը պիտի հասնի 4 միլիոնի:

Սերժ Սարգսեանի տուած այս խոստումները ընդհանրապէս ընդունուեցան մեծ թերահաւատութեամբ, նկատի առնելով այն պարագան, որ այն իր պաշտօնի ստանձնման առաջին օրէն սկսեալ միշտ ալ հանդէս եկած է նման լաւատես յայտարարութիւններով, որոնք գրեթէ բոլորն ալ մնացած են թուրքի վրայ:

Նախագահի ելոյթի այն բաժինը, որ կը վերաբերէր Հայաստանի բնակչութիւնը 4 միլիոնի հասցնելու մասին, այդ եւս ընդունուեցաւ մեծ վերապահութեամբ եւ նոյնիսկ ծիծաղով:

Չկայ հայ մը, որ պիտի չուզէր որ իր հայրենիքի բնակչութիւնը հասնի ու ինչու չէ նաեւ անցնի այդ 4 միլիոնը, քանի որ, անոր մէջ կը կայանայ Հայաստանի եւ հայութեան գոյութիւնն ու ապահովութիւնը՝ յառաջիկայ տասնամեակներու ընթացքին:

Պաշտօնական տուեալներու համաձայն, Հայաստանի ներկայի ժողովրդագրութեան պատկերը մնայուն անկումի մէջ է: Վերջին 6 տարիներուն, իրենց ծնողներուն հետ Հայաստանէն հեռացած են 34 հազար դպրոցական տարիքի երեխաներ: Ծնունդներու թիւը տարուէ տարի կը նուազի, նոյնպէս ամուսնութիւններու թիւը: Գիւղական շրջաններուն մէջ դպրոցները կը շարունակուին փակուիլ՝ բաւարար ուսանողներու չգոյութեան պատճառաւ: Այս բոլոր տուեալները ոչ միայն մտահոգիչ են, այլ համազօր են ազգային աղէտի, որու առաջը առնելու համար բաւարար չեն օդին մէջ նետուած թիւերով խօսիլը:

Վերջերս ՄԱԿ-ի կողմէ պատրաստուած ուսումնասիրութիւնը մը կը նախատեսէ, որ արտագաղթը նոյն ընթացքով պիտի շարունակուի ու մինչեւ 2050 թուականը Հայաստանը պիտի դառնայ 2 միլիոն բնակչութեամբ երկիր: Միջազգային այս կառոյցի գիտական տուեալները շատ աւելի վստահութեան արժանի են, քան Հայաստանի ուրիշ նախագահի խոստումները:

Սերժ Սարգսեան եւ կամ իրեն յաջորդները այսօր ունին գլխաւոր մէկ պարտականութիւն: Նախկասեցնել արտագաղթը ու այդ ընելու համար պէտք է սկսիլ իշխող արատաւոր համակարգի փոփոխութեամբ:

«ՄԱՍԻՍ»

Մոկերինի. «Եւրոմիութիւնը Պատրաստ է Խորացնել Յարաբերութիւնները Հայաստանի Հետ»



Ֆետերիքա Մոկերինի եւ տուարոյ Նալպանտեան Պրիւքսէլի մէջ կայացած մամուլի ասուլիսի ընթացքին

Եւրոմիութիւնը պատրաստակամ է շարունակել ու խորացնել յարաբերութիւնները Հայաստանի հետ՝ յայտարարած է կառուցիչ արտաքին գործոց նախարար Ֆետերիքա Մոկերինին Պրիւքսէլի մէջ, ուր այսօր տեղի ունեցած է Հայաստան-Եւրոմիութիւն համագործակցութեան խորհուրդի հերթական նիստը, մասնակցութեամբ Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարդ Նալպանտեանի:

Երկկողմ յարաբերութիւններէն բացի, Եւրոմիութեան ու Հայաստանի արտաքին գործոց նախարարները քննարկած են նաեւ տարածաշրջանի իրավիճակը: Պաշտօնական Պրիւքսէլը վերահաստատած է հայ-թրքական հաշտեցման աջակցելու իր պատրաստակամութիւնը՝ կոչ ընելով կողմերուն ներգրաւուիլ այդ գործընթացին մէջ՝ առանց նախապայմաններու:

«Եւրոմիութիւնը կ'ուզէ ընդլայնել եւ խորացնել համագործակցութիւնը Հայաստանի հետ: Մենք արդէն իսկ Հայաստանի թիւ մէկ առեւտրային գործընկերն ենք, խորարները քննարկած են նաեւ տարածաշրջանի իրավիճակը: Պաշտօնական Պրիւքսէլը վերահաստատած է հայ-թրքական հաշտեցման աջակցելու իր պատրաստակամութիւնը՝ կոչ ընելով կողմերուն ներգրաւուիլ այդ գործընթացին մէջ՝ առանց նախապայմաններու:»

«Եւրոմիութիւնը կ'ուզէ ընդլայնել եւ խորացնել համագործակցութիւնը Հայաստանի հետ: Մենք արդէն իսկ Հայաստանի թիւ մէկ առեւտրային գործընկերն ենք,

Շար.ը էջ 5

Թեքսաս Նահանգի Խորհրդարանը Ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը



Թեքսասի Հայ համայնքի եւ Ներկայացուցիչներու Տան անդամներ Ցեղասպանութեան բանաձեւի հաստատումէն ետք

Ամերիկայի մեծագոյն նահանգներէն մէկը նկատուող Թեքսասի Խորհրդարանը պաշտօնապէս ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը:

Հայկական Համագումարը կը տեղեկացնէ որ ցեղասպանութեան բանաձեւը նահանգի Ներկայացուցիչներու Տան կողմէ ընդունուած է միաձայնութեամբ՝ 137-0:

Բանաձեւին մէջ յատկապէս ըստուած է. «Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքին, փոքր եկող Օսմանեան կայսրութիւնը գործադրութեան դրաւ յատուկ ծրագիր մը՝ իր Հայ բնակչութիւնը բնաջնջելու նպատակով, որ

այդ ժամանակ կը հաշուէր աւելի քան երկու միլիոն»: Բանաձեւը շեշտելով կ'ըսէ. «Այս բանաձեւով Թեքսասի 85-րդ Ներկայացուցիչներու Տունը այսօր կը ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը»:

Հայկական Համագումարը այս առթիւ իր կը գնահատէ Թեքսասի Հայ համայնքի տարած աշխատանքը եւ յատկապէս Պր. Միհրան Արոյեանը, որ հանդիսացած է յաջողութեան մղիչ ուժը:

Ներկայացուցիչներու Տան անդամները անցեալ ամիս առիթը ունեցած էին դիտելու «Խոստումը» ֆիլմը, որ յատուկ ցուցադրուած էր Խորհրդարանէն ներս:

Թրամպի Կարչակագնը 67 Տոկոսով Կրճատած է Հայաստանի Օժանդակութիւնը

Մայիս 23-ին, Սպիտակ Տունը հրապարակեց Տոնալտ Թրամպի վարչակագմի 2018-ի տարեկան պիւտձէի նախագիծը, ուր արձանագրուած են մեծ կրճատումներ գրեթէ բոլոր բնագաւառներու մէջ, ներառեալ ընկերային նպաստներու եւ արտաքին օժանդակութիւններու գծով:

Առաջարկուող նախագիծով կրճատումի ենթարկուած է նաեւ Հայաստանին յատկացուող արտաքին օժանդակութիւնը:

Նախորդ տարուայ 20.4-ի փոխարէն, գալիք տարուայ պիւտձէով Հայաստանի պիտի տրամադրուի 6.8 միլիոն, ինչ որ կը նշանակէ 67 տոկոսի կրճատում:

Ատրպէյճանին տրամադրուող օժանդակութիւնը պակասած է 90 տոկոսով՝ եւ նախատեսուած գումարը միայն մէկ միլիոն տոլար է: Նոյնպէս, 58 տոկոսով կրճատուած է Վրաստանին յատկացուող օգնութիւնը:

Պիւտձէի այս նախագիծը, հրապարակուածն անմիջապէս ետք,

Շար.ը էջ 4

ՀԱՍ-ի Պաշտպանած Թեկնածուն Յաղթական



Լուս Աճեւըսի քաղաքապետական խորհուրդի նորընտիր անդամ՝ Սոնիքա Ռոտրիկեզ

Անցեալ շաբաթ տեղի ունեցան Լուս Անճեւըսի քաղաքապետական խորհուրդի ընտրութիւնները՝ 7-րդ ընտրաշրջանէն ներս, որ կ'ընդգրկէ նաեւ Սան լանտ-թասանկա թաղամասերը, ուր կը բնակին մեծ թիւով հայեր:

ՄԳՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդի պաշտպանած թեկնածու՝ Սոնիքա Ռոտրիկեզ 7416 ձայնով առաւելութեան հասաւ իր մրցակից Քարօ Թորոսեանի նկատմամբ, որ ստացաւ 6583 ջուէ:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Սերժ Սարգսեանը Յայտարարեց, Թէ Որքան Է Ծրագրում Մնալ

ՅԱԿՈՔ ԲԱԴՂԱԼԵԱՆ

Նոր խորհրդարանի առաջին նիստում Սերժ Սարգսեանի ելույթը հանրապետության արժանատի տարբեր խմբեր գնահատեցին որպէս «ծրագրային», այն պարզ պատճառով, որ Սարգսեանը դրանում շոշափում էր պետական կենսագործունէութեան գրեթէ բոլոր ոլորտներն ու խնդիրները, նաեւ սահմանում առաջիկայ տարիների նպատակներ ու թիրախներ:

Ելույթի այդ բնույթն էլ հիմք տուեց եզրակացնել, որ Սարգսեանը ամենեւին չի ծրագրում թողնել իշխանութեան դեկոր, եւ այդօրինակ ելույթը ոչ թէ «կարգադիպ», այլ մնացողի ելույթ է:

Սերժ Սարգսեանը յամառօրէն խուսափում է ասել՝ մնում է, թէ հեռանում: Նա միայն ակնարկում է: Ամենատրոշակին առայժմ եղել է նախընտրական շրջանում Մարտի 25-ին Արցախում արած ակնարկը, թէ երբեք չի ծրագրել վաղուայ դերն ու դիրքը, բայց միշտ եղել է այնտեղ, որտեղ ամենից անհրաժեշտն է եղել անվտանգութեան տեսանկիւնից:

Թէ որ տեղը նա ամէնից անհրաժեշտը կը համարի 2018-ի Ապրիլից յետոյ, պարզ չէ: Տեսականում այդպիսի տեղերը անկասկած կը լինեն մի քանիսը, սակայն ակնյայտ է, որ անվտանգութիւնը ստույգ պարագայում իշխանութիւն հասկացութեան հոմանիշն է: Այսինքն, Սերժ Սարգսեանը կը լինի այնտեղ, որտեղ ամենից մեծն է իշխանութեան վրայ ազդելու հնարաւորութիւնը:

Բայց Ազգային ժողովում ունեցած ելույթում Սերժ Սարգսեանը նաեւ ակնարկում էր, որ 2018-ը որպէս այդպիսին իր համար իրավիճակային խնդիր է, իսկ աւելի երկարաժամկէտ առումով նա իր «խնդիրը» չափում է առնուազն 23 տարիների հեռանկարով՝ մինչեւ 2040 թուական:

Յամենայն դէպս, խորհրդարանի իր ելույթում Սարգսեանը սահմանում էր տնտեսական ցուցանիշներ մինչեւ 2040 թուական, այդպիսով փաստացի ակնարկելով, որ իշխանութեան հեռանկարը, իշխանութեան ժամանակն ու տարածութիւնը չափում է մինչեւ 2040:

Միւս կողմից, իհարկէ, կարող է լինել մէկ այլ պատճառ, թէ ինչու է Սերժ Սարգսեանը սահմանում նպատակային տնտեսական թիրախներ 2040-ի համար, ոչ թէ ասենք 2022-ի, երբ կ'աւարտուի 2017-ի ընտրական ցիկլը, եւ նրա գլխաւորած կուսակցութիւնը իր գործով կը ներկայանայ ընտրողին, նոր «քուէ» ստանալու համար: Առաւել տրամաբանական կը լինէր, յատկապէս ելույթով Հայաստանի տնտեսական վիճակից, որ Սերժ Սարգսեանը սահմանէր նպատակներ մինչեւ 2022 թուականը՝ գտնէ, եւ պատասխանատուութիւն ստանձնէր դրանց համար:

Մինչդեռ նա խօսում է 2040-

ի կտրուածքով, այսինքն իր համար սահմանում «անպատասխանատուութեան» 23 տարի ժամանակ: Որովհետեւ, որքան նա հեռացնում է այսպէս ասած սահմանուած թուաբանական նպատակը, այդքան հեռացնում է նաեւ այդ նպատակի համար կոնկետ պատասխանատուութիւն մատնանշող հարցադրումները: Դե, իսկ 2039 թուականին, կամ 37-38 թուականներից սկսած Սերժ Սարգսեանը մի բան կը մտածի պատասխանատուութիւնը լողզելու համար:

Անկասկած, պետութիւնները, պետական եւ ընդհանրապէս քաղաքական էլիտաները պէտք է կարողանան գործել եւ առաջնորդուել ոչ միայն կարճաժամկէտ, այլ երկարաժամկէտ ծրագրերով, պլանաւորմամբ: Պետութիւնները պէտք է կարողանան ունենալ տասնամեակների կանխատեսումներ, որոնք պէտք է լինեն ցանկացած սոլիդ պետութեան կենսագործունէութեան բազային հիմքում, մի քանի տարբերակներով: Եւ անկախ իհարկէ ընտրական ցիկլերի տեւողութիւնից, պետական էլիտաները պէտք է սահմանեն երկարաժամկէտ նպատակներ եւ ռազմավարութիւն:

Միւս կողմից, սակայն, մեղմ ասած դժուար է վստահելի կամ սոլիդ համարել մի գործչի ռազմավարութիւն առաջիկայ 23 տարիների համար, երբ նա աչքի է ընկել բազմաթիւ ծրագրային խոստումներով, որոնց առումով սակայն ամէն ինչ կարգին է միայն «թղթով»: Դժուար է այսպէս ասած պետական ռազմավարական կանխատեսումները կամ ծրագրերի մասով սոլիդ եւ վստահելի համարել մի գործչի, որը աչքի է ընկել Սեպտեմբերի 3-ի շրջադարձով:

Դժուար է վստահելի եւ սոլիդ որակել մի գործչի պետական ռազմավարութիւն, որն Ապրիլի պատերազմից յետոյ փաստօրէն երկու անգամ յայտարարեց ու ակնարկեց Ռուսաստանի մասով, թէ իրեն հաւաստիացնում էին, որ Ատրպէյջանը չի գնայ պատերազմի:

Սերժ Սարգսեանի գործունէութիւնը վստահելի եւ համոզիչ է իր իշխանութեան խնդիրների ռազմավարական գնահատման եւ հաշուարկի տեսանկիւնից: Այդ հարցում նա անշուշտ անգերազանցելի է եւ արդիւնաւէտ: Հետեւաբար, 2040-ի սահմանած թիրախը պէտք է զիտարկել հենց ադ հարթութեան վրայ, 2040-ի խնդիրը արդիւնաւէտ կարող է լինել նրա իշխանութեան տեսանկիւնից:

Ըստ այդմ, սահմանուած տնտեսական նպատակները կարող են իրականանալ, եթէ դա պահանջի նրա իշխանութեան շահը: Եթէ անհրաժեշտ լինի հակառակը, այս սահմանուած տնտեսական նպատակները շատ հանգիստ կը զոհաբերուեն այդ շահին, ինչպէս մինչ այժմ հռչակուած առաւել կարճաժամկէտ կամ միջնաժամկէտ տնտեսական ու քաղաքական խնդիրներն ու նախաձեռնութիւնները:

«ԼՐԱԳԻՐ»

Փակուծ են Ալիեւի «Օդերը»

ԹԱՍԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին հասցեական յայտարարութիւնը, որում կոնկրետ մեղադրանքի սլաքներն ուղղուած էին Ատրպէյջանին՝ Պաքստանում բացասական է ընդունուել: Յիշեցնենք, որ յայտարարութեան մէջ նշուել է, որ Ատրպէյջանը հրթիռային կրակ է բացել շիրման գծի երկայնքով:

Վերջին տարիների ընթացքում առաջին անգամ համանախագահներն արձանագրել էին հրադադարն առաջինը խախտած կողմին՝ նկատելով, որ լարուածութիւնն աճել էր, քանի որ Ատրպէյջանն է խախտել հրադադարը, իսկ հայկական կողմը պատասխանել է այդ գործողութիւններին: Գրեթէ նոյնաբովանդակ յայտարարութիւն էր արել նաեւ Ռուսաստանի արտգործնախարարութեան խօսնակ Մարիա Զախարովան:

Ղարաբաղում լարուածութիւնն աճել էր Մայիսի 15-ին: Ատրպէյջանի զինուած ուժերը երեք հրթիռային հարուած էին հասցրել Ղարաբաղի ուղղութեամբ, վնասելով երկու միակողմ գինտեխնիկա, որոնցից մէկը՝ մարտական՝ «ՕՍԱ» տեսակի զենիթահրթիռային համակարգ:

Ահա, Ատրպէյջանի ԱԳՆ-ն արձագանքել է ԵԱՀԿ Մինսկի խմբի նախօրէին տարածած յայտարարութիւնը՝ այն որակելով «անարդար եւ ոչ օբեկտիւ»: Ատրպէյջանի ԱԳՆ-ի պաշտօնական ներկայացուցիչ Հիքմեթ Հաջիբեյը նշել է, որ «ատրպէյջանական ՁՈՒ-ն գտնուում է Ատրպէյջանի ինքնիշխան տարածքում» եւ կարող է անել այն ամէնը, ինչ ցանկանայ: Ընդ որում, Հաջիբեյը չի ժխտել գնդակոծութեան փաստը:

Պաշտօնական Ստեփանակերտը ողջունել է Մինսկի խմբի համանախագահների եւ Ռուսաստանի արտգործնախարարութեան յայտարարութիւնները: Ղարաբաղի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Դաւիթ Բաբայանի կարծիքով՝ յայտարարութիւնների այս ձեւը պէտք է շարունակական լինի, որ ազդեցութիւն ունենայ:

Վերջին շրջանում սա առաջին դէպքն է, երբ ԵԱՀԿ-ն եւ Ռուսաստանը յստակ յայտարարում են՝ լարուածութեան աճի պատճառը Ատրպէյջանի գործողութիւններն են: Սա Ատրպէյջանի նկատմամբ միջազգային հանրութեան կողմից բացայայտ վերաբերմունքի դրսեւորում է: Ատրպէյջանին հասկացնում են, որ արդէն սահմաններից դուրս է գալիս, եւ հնարաւոր չէ այս ձեւով շարունակել բանակցութիւնները:

Բացի այդ նման յայտարարութեան պատճառը բանակցութիւններում Ատրպէյջանի պահուածքն է՝ նախապայմաններ ներկայացնելն ու միւս կողմից արգելափակելը՝ միջնորդների առաջարկները տապալելու արդիւնքում: Սրա արդիւնքում ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունէութիւնն է անիմաստ դառնում, ինչն էլ մեծ հաճոյքով իրականացանում է պաշտօնական Պաքստան:

Ի վերջոյ, Ատրպէյջանի սանձարձակ պահուածքն ամբողջութեամբ հարուածում է ԱՄՆ-ի, Ֆրանսայի եւ Ռուսաստանի իմիջին: Այս իրավիճակում, ԵԱՀԿ

Մինսկի խմբի համանախագահները որոշեցին սանձել Ատրպէյջանին, որպէսզի նա առաջիկայում կանխեն սահմանային միջադէպերը:

Հայկական կողմի համար այս դրական մթնոլորտը պէտք է պահպանել, այսինքն՝ դիւանագիտական աշխատանքը պէտք է տարուի հետեւողականօրէն, որպէսզի Ատրպէյջանի, ինչպէս ասում են՝ «օդերը փակուի»:

Ատրպէյջանը տեւական ժամանակ դիմում էր դիւերսիոն գործողութիւններին, սակայն ապրիլեան պատերազմից յետոյ, երբ Հայկական կողմն արդիւականացրեց սահմաններում սարքաւորումները, Ատրպէյջանի «մանկերկու» գործն էլ բարդացաւ, աւելին՝ ամիսներ առաջ Հայկական կողմը ստիպուած եղաւ կանխարգելիչ հարուած հասցնել, ատրպէյջանական կողմը գոհեր ունեցաւ, իսկ Ատրպէյջանի դիւերսիոն ներթափանցման փորձը կանխուեց:

Այժմ էլ Ատրպէյջանը դիմեց այլ՝ «հրթիռային» քայլի, բայց հիմա էլ միջնորդները կոշտ արձագանքեցին: Սա արդէն դիւանագիտական-քաղաքական հարուած էր Ալիեւի ռեժիմին:

Խոստովանենք, որ այլ ճանապարհ, իսկապէս, չէր մնացել: Առանց այն էլ բանակցային փակուղային իրավիճակը չլի է վտանգներով, բայց նոյնիսկ այս պայմաններում Ալիեւը շարունակում էր սանձարձակ պահել իրեն ոչ միայն հայկական կողմի նկատմամբ, այլեւ միջնորդ պետութիւնների առաքելութեան, ինչն, ի վերջոյ դուրս է որեւէ տրամաբանութիւնից, եւ արդէն հունից հանում է համանախագահող երկրներին:

«ՀԱՅԵԼԻ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՂԵ ԱՏԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնոր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԼԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արա Բաբլոյեան Ընտրուած է Ազգային Ժողովի Նախագահ

Հայաստանի նոր Ազգային Ժողովի անդրանիկ նիստի ընթացին, Արա Բաբլոյեան ստանալով քուէարկութեան մասնակցած 100 պատգամաւորներէն 88-ի ձայները ընտրուեցաւ խորհրդարանի նախագահ:

Ան ելոյթ ունեւորելով ըսաւ. «Մեծ պատասխանատուութեամբ կ'ընդունիմ ինձի տրուած բարձր վստահութիւնը: Ստանձնելով Հայաստանի Ազգային Ժողովի նախագահի պաշտօնը՝ յանուն համագլխային նպատակներու իրականացման եւ հայրենիքի հզօրացման ու բարգաւաճման՝ կ'երդուիմ՝ բարեխղճօրէն կատարել ժողովուրդին առջեւ ունեցած պարտաւորութիւններս, պահպանել Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնը եւ օրէնքները, նպաստել Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեան եւ շահերու պահպանման, ընել ամէն ինչ քաղաքացիական համերաշխութեան, ազգային ու համամարդկային արժէքներու պահպանման համար»:

Յիշեցնելով, որ ԱԺ նախագահի թեկնածու Արա Բաբլոյեանի մրցակիցն էր «ԵԼՔ» դաշինքին համոն Մարութեան, որ ստացաւ 12 ձայն:



Ազգային Ժողովի նոր նախագահ Արա Բաբլոյեան

Այս արդիւնքէն ետք «ԵԼՔ» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանը «Ծառուկեան» դաշինքի հարց ուղղեց թէ ինչու իրեն ընդդիմադիր հռչակած դաշինքի բոլոր պատգամաւորները կողմ չեն քուէարկած ԱԺ նախագահի «ԵԼՔ» թեկնածուի օգտին:

«Ցաւալի է, որ ընդդիմադիր խմբակցութեան պատգամաւորները խիղճն իրենց տարել է դէպի իշխանութիւն», արձանագրած է Փաշինեան:

Պատգամաւորի Մասին Գրել է Առաջ Այսույեա Պէտք է Ստանալ Ռամադանի Առթիւ

Հայաստանի մէջ լրատուամիջոցներու հաւաքած հանրային կարեւորութեան անձնակազմը ստեղծեցին երեք ստանդարտադրու հայու հետեւ կրնան հետապնդուիլ օրէնքով: Անձնակազմը առաջնորդու պաշտպանութեան մասին օրէնքին մէջ դեռ անցեալ տարուայ Դեկտեմբերէն հանուած է առաջին յօդուածի երրորդ կէտը, որ օրէքը չէր տարածուել լրագրողներու վրայ:



Մամուլի ազատութիւնը սահմանափակող օրէնքի շուրջ քննարկումի մասնակիցները

Ոստիկանական պաշտպանութեան կոմիտէի նախագահ Աշոտ Մելիքեանը նշած է. «Եթէ լրագրողը խորհրդարանից, օրինակ, խորհրդարանից ինչ-որ մի ունեւորած է տալիս եւ մի շարք պատգամաւորները մասին պիտի խօսքը զնայ, ուրեմն ինքը պիտի համաձայնեցնի նրանց հետ՝ արդէօք իրենք համաձայն են, թէ չէ իրենց անուն ազգանունը օգտագործելու»:

Եւրոպական երկիրներու մէջ լրագրողներու հանդէպ այսպիսի արգելքներ գոյութիւն չունին, ըսած է Աշոտ Մելիքեանը: Մինչդեռ Հայաստանի մէջ լրագրողը այսուհետեւ պէտք է որեւէ պատգամաւորի կամ «օլիգարխի» հանրային նշանակութեան անձնակազմը ստեղծելու հրապարակումը համաձայնեցնէ անոր հետ. «Կարծում եմ, որ դա նախ եւ առաջ հակասում է ԶԼՄ մասին օրէնքին եւ Սահմանադրութեամբ ամրագրուած խօսքի ազատութեան իրաւունքին»:

Անձնակազմը ստեղծելու պաշտպանութեան գործակալութեան պետ Ծուլան Տոյոյեան ըսած է, որ իրականութեան մէջ Սահմանադրութեան եւ օրէնքներու հետ այդ յօդուածի հանումը հակասութիւն չունի. «Քանի ես եմ

ղեկավարը, ես մամուլին չեմ կանչու, ես ասել եմ՝ իմ վրայ յոյս չդնէք, ես ոչ մի վարոյթ մետալոյով կապուած չեմ յարուցելու»:

Ծուլան Տոյոյեանը դեռ երեք տարի պիտի ղեկավարէ նախարարութեան աշխատակազմի անձնակազմը ստեղծելու գործակալութիւնը: Երեք տարի յետոյ ան չի գիտեր, թէ ինչպէս պիտի կիրառուի օրէնքը: Փաստ է, որ ամբողջ Եւրոմիութեան մէջ լրագրողներու եւ ստեղծագործողներու համար անձնակազմը սահմանափակումները չեն գործել. «Մեր օրէնքը դուրսէն սահմանափակումները չեն գործել. «Մեր օրէնքը դուրսէն սահմանափակումները չեն գործել. «Մեր օրէնքը դուրսէն սահմանափակումները չեն գործել»:

Այնուամենայնիւ, եթէ, ըսելով, պատգամաւոր Սամուէլ Ալեքսանեանը պահանջէ, որ իրեն վերաբերող հանրային կարեւորութեան անձնակազմը ստեղծելու հրապարակումը անպայման համաձայնեցուի իր հետ, լրագրողը այսուհետեւ պարտաւոր է այդ մէկը ընել, հակառակ պարագային պէտք է օրէնքի առջեւ պատասխան տայ. «Առաջ մենք կարող էինք ասել՝ մետալոյ բացառութիւն է, զնայցէ, հիմա պիտի յարուցենք վարոյթը, պէտք է քննենք գործը, իսկպէս հիմնաւորենք, որ

Ընդդիմութիւնը Կը Պնդէ Որ վարչապետը Նշանակուած է Սահմանադրութեան Նախաձեռնող

Ընդդիմադիր «ԵԼՔ» դաշինքի պատգամաւոր համոն Մարութեանի պնդմամբ՝ նախագահ Սերժ Սարգսեանը Սահմանադրութեան պահանջներու խախտմամբ վարչապետ վերանշանակած է Կարէն Կարապետեանին, քանի որ այդ որոշման համար չէ խորհրդակցած ԱԺ բոլոր խմբակցութիւններու հետ, ինչը պատգամաւորի պնդմամբ՝ պարտադիր պահանջ է:

Նշելով, որ «ԵԼՔ» դաշինքի հետ որեւէ քննարկում չէ եղած՝ Մարութեանը յիշեցուցած է. - «Ես նախկինում եղել եմ անկախ պատգամաւոր, ես չեմ եմ, որ խմբակցութիւններ չես այդպիսի խորհրդակցութիւններ եղել են նշանակումից առաջ եւ պէտք է հիմա էլ լինէր, բայց չի եղել»:

Վեցերորդ գումարման Ազգային Ժողովի առաջին նստաշրջանի օրը կառավարութիւնը Սահմանադրութեան պահանջով հրաժարական ներկայացուցած էր: Նոյն օրը Սերժ Սարգսեանը Կարէն Կարապետեանին վերանշանակած էր վարչապետ, թէեւ Սահմանադրութեան համաձայն այդ մէկը կրնար ընել տասնօրեայ ժամկէտի մէջ: Սահմանադրութեան 55-րդ յօդուածի 4-րդ կէտը, որուն յղումը ըրած է «ԵԼՔ»-ի պատգամաւոր համոն Մարութեանը, կը սահմանէ՝ եթէ խմբակցութիւններու հետ խորհրդակցութիւնները անհնարին են, ապա նախագահը վարչապետ կը նշանակէ առաւել թիւով պատգամաւորներու հաւանութեան արժանացած անձին: Մարութեանը նկատած է՝ ընդդիմութեան ղեկավարութիւնը մեծցնելու մասին խօսող Սերժ Սարգսեանը կրնար, թէկուզ ձեւականօրէն պահպանել ընդդիմադիրներու հետ խորհրդակցելու պահանջը: «ԵԼՔ» խմբակցութիւնը, միեւնոյնն է, նախագահի որոշման վրայ ազդել չէր կրնար:

Խորհրդարանին մէջ մեծութեամբ երկրորդ ուժի՝ ընդդիմադիր «Ծառուկեան» դաշինքի պատգամաւոր, ԱԺ փոխնախագահ Միքայէլ Մելքոնեանի խօսքով, վարչապետ նշանակելու հարցին մէջ Սերժ Սարգսեանը չէ խորհրդակցած նաեւ իրենց խմբակցութեան հետ:



«ԵԼՔ» դաշինքի պատգամաւոր Էտոմոն Մարութեան

ԱԺ խմբակցութիւններու հետ խորհրդակցութիւններու վերաբերեալ տեղեկութիւն չկայ նաեւ նախագահի պաշտօնական կայքէջին մէջ: Հանրապետականներու գործընկեր Դաշնակցութիւնը, ըստ խմբակցութեան քարտուղար Աղուան Վարդանեանի, խորհրդակցութիւն ունեցած է նախագահի հետ: «Ազատութեան» հետ հեռախօսակցուցի ընթացքին, սակայն, վարդանեանը չչստակեցուց, թէ երբ եւ ինչ ձեւաչափով եղած է այդ խորհրդակցութիւնը:

Հանրապետական խմբակցութեան ղեկավար Վահրամ Պաղտասարեանը ընդունած է՝ բոլորի հետ չէ խորհրդակցած, սակայն ատոր համար, ըստ անոր, առարկայական պատճառներ կային. - «Դա պարզապէս անհնարին էր, որովհետեւ ամսի 18-ին դեռ խմբակցութիւնները ձեւաւորուած չէին»:

Էտմոն Մարութեանը հակադարձած է. - «Հենց այդ փաստարկը զարիս է ապացուցելու, որ եթէ խմբակցութիւնները չեն ձեւաւորուել, պէտք է սպասել ձեւաւորուելին, նոր քննարկում անել, ոչ թէ ընդհակառակը»:

Կ'ակնկալուի, որ յառաջիկայ օրերուն վարչապետ Կարէն Կարապետեանը նոր խորհրդարանին կը ներկայացնէ կառավարութեան կառուցուած քայլի փոփոխութիւններու հարցը: Ընդդիմադիր համոն Մարութեանը կը պատրաստուի վարչապետի նշանակման հարցը բարձրացնել նաեւ այդ նիստին:

Վարչապետ Կարէն Կարապետեան Ռամադանի Առթիւ Դեսպանին Յետ

Վարչապետ Կարէն Կարապետեան ընդունած է Հայաստանի Հանրապետութեան մէջ Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտակարգ եւ լրագոր դեսպան Ռիչարտ Միլինի:

Կառավարութեան ղեկավարը կարեւորած է նման ձեւաչափով պարբերական հանդիպումները, որոնք լաւ հնարաւորութիւն են հայ-ամերիկեան համագործակցութեան ընթացքի եւ զարգացման հեռանկարներու շուրջ միտքեր փոխանակելու համար:

Զրուցակիցները միտքեր փոխանակած են, մասնաւորապէս, հայ-ամերիկեան տնտեսական համագործակցութեան օրակարգի եւ համատեղ ծրագրերի որոշումը:

Կարէն Կարապետեանը շահաւորաբար օրեւորեց իր հետ ընդհանուր եւ ղեկը պաշտպանական կամ հանրային որեւէ գործիչ օրէնքի այս առաւելութեանն չէ օգտուած:

Քննարկուած են ներդրումներու ներգրաւմանը, պիզնէս միջավայրի բարելաւման, հարկային եւ մաքսային, դատախարական ոլորտի բարեփոխումներուն, կաշառակերութեան դէմ պայքարի ուղղութեամբ փոփոխութեան վերաբերող շարք մը հարցեր:

Կարէն Կարապետեանն ու Ռիչարտ Միլինը անդրադարձած են նաեւ ուժանիւթի, գրասաշրջութեան, տեղեկատուական թեխնոլոգիաներու, հանքարդիւնաբերութեան եւ գիւղատնտեսութեան ոլորտներու մէջ երկկողմ գործակցութեան խորացման հեռանկարներուն: Այս մասին տեղեկացուցած են կառավարութեան:

Ի դէպ, Հայաստանի մէջ գտնուող Եւրոմիութեան կառույցները օրէնքի այս փոփոխութեանն տեղեկ չեն եւ դեռ դիրքորոշում չեն յայտնած:

ԼՈՒՐԵՐ

Սերժ Սարգսեան.«Պատերազմի Նոր Փուլ Ենք Յայտարարում Անարդարութեանը»



Ազգային ժողովի առաջին նիստի ընթացքին ելոյթ կ'ունենայ նախագահ Սերժ Սարգսեան

Վեցերորդ գումարման Ազգային ժողովի առաջին նիստին ունեցած՝ աւելի քան մէկ ժամ տեւած իր ծաւալուն ելոյթին մէջ նախագահ Սերժ Սարգսեանը խօսած է խորհրդարանի դերի բարձրացման, երկրի կառավարման համակարգը փոխելու միջոցով չեղարկուած ճգնաժամերը վերացնելու, ընդդիմութեան դերի բարձրացման, կաշառակերութեան, «ներքին թշնամիի» դէմ պայքարի, ընդհուպ մինչեւ 2040 թուականը ընդգրկող ժամանակաշրջանի անտեսական ցուցանիշներու, նաեւ Լեւոնային Ղարաբաղի խնդրի մասին:

Սերժ Սարգսեանը նախ շնորհաւորած է բոլոր խմբակցութիւններուն՝ «ագատ, թափանցիկ եւ բարձր գնահատականի արժանացած ընտրութիւններու համար», յորդորելով նաեւ մոռնալ նախընտրական փուլին մէջ իրար հասցէին հնչեցուցած մեղադրանքները: Երկրի ղեկավարը ըսած է, թէ խորհրդարանի ամպիոնէն կ'ակնկալէ լսել սուր, քննադատական, բայց հիմնաւորուած ելոյթներ: Ապա խօսած է, իր բնորոշմամբ, սխալ երեւոյթի մը մասին: «Առկայ է մի ընկալում, որ ընդդիմադիր պատգամաւորը, ով կողմ է քուէարկել իշխանութեան նախաձեռնութեանը, այլեւս ընդդիմութիւն չէ, կամ աւելի վատ՝ ծախուած է: Այս տրամաբանութիւնն ու մտածողութիւնը լաւ բանի չեն յանգեցնի», նշած է նախագահը:

«Նոր Սահմանադրութիւնը հնարաւորութիւն տուեց խուսափել չեղարկուած ճգնաժամերից»

Խօսելով կաշառակերութեան դէմ պայքարի մասին, Սերժ Սարգսեանը շեշտած է, թէ կաշառակերութիւնը այսօր փոխած է իր դէմքը, ապա առաջարկած է յաջողութեան իր բանաձեւը: «Իհարկէ, այսօր կոռուպցիայի դէմքը փոխուել է: Աստիճանաբար այն աւելի տեսանելի եւ խոցելի է դառնում: Պետութիւնը շարունակում է հասարակութեան եւ անհատի մէջ արմատաւորել «կոռուպցիայի հանդէպ զրօ հանդուրժողականութեան» մշակոյթը: Բայց մենք չենք կարող բաւարարուել առկայ ձեռքբերումներով: Մենք պէտք է կատարելագործենք հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը եւ ապահովենք դրա հետեւողական զարգացումը:

Խորհրդարանի մէջ մեծամասնութիւն կազմող Հանրապետականի ղեկավարը նաեւ խօսած է «ներքին թշնամիի» մասին, որու անունն է «անարդարութիւն» եւ որ, անոր խօսքով, արտաքին թշնամիէն ոչ պակաս վտանգաւոր է: Այդ առնչութեամբ՝ Սերժ Սարգսեանը ըսած է. «Պատերազմի նոր փուլ ենք յայտարարում անարդարութեանը: Դիմում եմ բոլորին. մեզնից իւրաքանչիւրը, ինչպէս որ պայքարել ու պայքարում է մեր հայրենիքի անկախութեան, նրա սահմանների անվտանգութեան համար, նոյնպիսի նուիրուածութեամբ ու ջանասիրութեամբ պիտի պայքարի արդարութեան համար»:

Խօսելով Լեւոնային Ղարաբաղի խնդրի մասին, Սերժ Սարգսեանը ըսած է, թէ կ'ուզէ յստակութիւն մտցնել նախընտրական շրջանին այս հարցի վերաբերեալ հնչեցուած քանի մը միտքերու շուրջ: Ըստ էութեան՝ անդրադառնալով Հայաստանի առաջին նախագահ Լեւոն ՏէրՊետրոսեանի վերջին պնդումներուն, երկրի ղեկավարը ըսած է. «Նախ փորձ կատարուեց վերակենդանացնել Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան շուրջ վաղեմի առաջարկներից մէկի քննարկումը, ինչն, իհարկէ, չստացուեց: Եւ դա բնական է: Պնդել, թէ անցեալում լաւագոյն փաստաթուղթն է բանակցուել, որն այսօր կարող է հանգուցալուծման բանալի լինել, ուղղակի նշանակում է մեղանչել իրականութեան դէմ»:

Իր ելոյթին մէջ Սերժ Սարգսեանը խօսած է նաեւ երկարամտակէտ անտեսական աճի եւ ընդհուպ մինչեւ 2040 թուականի թիրախային ցուցանիշները ապահովելու կարեւորութեան մասին: Երկրի ղեկավարը շեշտած է՝ անընդունելի է ունենալ աղքատութեան բարձր ցուցանիշ, քանի որ հայերը յայտնի են իրենց բացառիկ ձեռնարկատիրական ունակութիւններով:

Ապա Սարգսեանը նշած է, թէ աղքատութեան կրճատման ինչպիսի ցուցանիշներ մտադիր են ապահովել. յառաջիկայ 5 տարում՝ 18 տոկոս, իսկ 2040ին՝ 78 տոկոս աղքատութիւն: Սարգսեանը չէ թաքցուցած՝ ակնկալիքներ ունի նաեւ բնակչութեան թուաքանակի աճի հետ կապուած: «2040 թուականին պէտք է հասնել առնուազն 4 միլիոն բնակչի», ըսած է նախագահը:

Թրքական Դատարանը Պահանջած Է Կարօ Փայլանը Զրկել Անձեռնախցիկաւ

Թուրքիոյ արդարադատութեան նախարարութիւնը խորհրդարան ուղարկած է Պոլսոյ ծանր յանցագործութիւնները քննող 14-րդ դատարանի պատրաստած մեղադրական եզրակացութիւնը, որով կը պահանջուի հայ պատգամաւոր Կարօ Փայլանին զրկել պատգամաւորական անձեռնախցիկաւ թեւէն: Այս մասին յայտնած է թրքական T 24 լրատուամիջոցը:

Դատարանը քրտամէտ ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան պատգամաւորին մեղադրած է 2016 թուականի 25 Մարտին լրագրողներ ձան Տիւնտարի եւ Էրտէմ Կիւլի գործով դատական նիստի ժամանակ «ծառայողի աշխատանքը խոչընդոտելու եւ դատավարութեան գաղտնիութիւնը խախտելու» մէջ: Համաձայն մեղադրանքի՝ Փայլանը հրաժարած է դուրս գալ դատական նիստերու դահլիճէն՝ այդպիսով խոչընդոտելով դատավարութեան բնականոն ընթացքը եւ խախտելով գաղտնիութիւնը:

«Սա յօրինուած մեղադրանք է, որով շատ մարդիկ՝ լրագրողներ, քաղաքական գործիչներ կալանաւորուած են», ըսած է Փայլանը:



Թուրքիոյ խորհրդաւանի հայ պատգամաւոր Կարօ Փայլան

լանը՝ նշելով, որ բոլոր դատարանները կ'առաջնորդուին անով, թէ ինչ կ'ըսէ կամ կը մտածէ երկրի նախագահը: «Գործ ունինք կուսակցական դատական համակարգի հետ: Այստեղ ընդդիմադիր պատգամաւորներուն կամ ընդդիմութեան ներկայացուցիչներուն կը դիտարկեն իբրեւ տարրեր, որոնց պէտք է ցոյց տալ իրենց տեղը», ընդգծած է ան:

Հայաստանը Նոր Զէնք Ունի, Որ Գաղտնի Կը Պահուի

2018-2019 թուականներուն Հայաստանը գինատեսակներու նոր խմբաքանակ պիտի ստանայ Ռուսաստանէն, որ կը ներառէ եւ 200 միլիոն տոլար վարկային ծրագիրը, եւ ընթացիկ համագործակցութիւնը: Այս մասին լրագրողներուն ըսած է ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան պաշտպանական քաղաքականութեան վարչութեան պետ Լեւոն Այվազեանը:

Ան չէ մանրամասնած, թէ ինչ գինատեսակներու մասին է խօսքը՝ աւելցնելով, որ միջպետական վարկի ծիրէն ներս ձեռք բերուող գինատեսակներու ցանկը արդէն հրապարակուած է, այլ կարգի գինատեսակներու մասին ձեռնպահ կը մնայ խօսելէ, գաղտնիութեան համար:

«Խօսքը վերաբերում է նրան, որ հայ-ռուսական ռազմաթիւնիքական համագործակցութեան շրջանակներում իրականացուող ծրագրերով նոր գէնքի խմբաքանակ է մատակարարուելու Հայաստանին: Մենք ունենք տարբեր ծրագրեր, որոնցից մէկը միջպետական վարկի ծրագիրն է: Դրանով Հայաստան սպասարկուողութեան ու ռազմական թիւնիքայի ներկրումն իրականացում է կանոնաւոր ձեռք, ըստ մեր կողմից հաստատուած ժամանակացուցի: Որեւէ ուշացում չի լինում, ընդհակառակը, որոշ գինատեսակների առումով նոյնիսկ մատակարարումները ժամկէտից շուտ են կատարուում: Երկրորդը, երկու պետութիւնների պաշտպանութեան նախարարու-

թիւնների միջեւ առկայ ռազմաթիւնիքական համագործակցութեան շրջանակներում տարբեր սպառազինութեան տեսակներ ու ռազմամթերք է ներկրում Հայաստան», - ըսած է ան:

Պէ պաշտօնեան պնդած է, որ Հայաստանը Ռուսաստանէն յատուկ գիներով ձեռք բերած է սպառազինութիւնը: Անոր խօսքով՝ Հայաստանը Ռուսաստանի հետ ունի յատուկ համաձայնագիրներ, որոնք թոյլ կու տան Ռուսաստանի հետ ռազմաթիւնիքական ոլորտի համագործակցութիւն իրականացնել յատուկ պայմաններով: «Դա իրենից ենթադրում է այն, որ սպառազինութիւնների ու ռազմական թիւնիքայի գնումների դէպքում մենք ՌԴ-ից կարողանում ենք դրանք ձեռք բերել Ռուսաստանի ներքին գներով: Այսինքն՝ այն գները, որոնք գործում են ՌԴ բանակի համար, նոյն գները գործում են նաեւ Հայաստանի բանակի համար», - աւելցուցած է Այվազեանը:

Պէ պաշտօնեան անդրադարձած է նաեւ ատրպէյճանական կողմի տեղեկութիւններուն, թէ հայկական կողմը օրերս մարտական անօդաչու սարքեր գործի դրած է:

«Անօդաչուներ նոր չէ, որ մենք կիրառում ենք, արդէն բաւական երկար տարիներ կիրառում ենք: Ինչ վերաբերում է հարուածային անօդաչուներին, եկէք ես ձեռնպահ մնամ այդ հարցի պատասխանից, որովհետեւ դա գաղտնիութիւն է պարունակում», - ըսած է ան:

Թրամփի Վարչակազմը Կրճատած Է

Շարունակուած էջ 1-էն

արժանացաւ քննադատութեան, ե՛ւ Հանրապետական ե՛ւ Դեմոկրատ գոնկրէսականներու կողմէ, որոնք կրնար փոփոխութիւններու ենթարկել եւ վերջնական

տեսքի բերել էտք վաւերացնել գայն: Այս ընթացքին, հայամէտ գոնկրէսականները առիթ պիտի ունենան Հայաստանին տրամադրուելիք նպաստները եւս որոշ չափով վերատեսուութեան ենթարկելու:

ՄԱՍԻՍ

Ուաշինգտոնի Մեջ Թուրքիոյ Դեսպանատան Մօտ Գայթակղեցուիչ Միջադէպի Յարուցած Լարուածութիւնը Հէ Թուլացած



Անցած շաբաթ Ուաշինգթընի մէջ Թուրքիոյ դեսպանատան մօտ տեղի ունեցած գայթակղացիին ծեծկոտուէն ետք կը շարունակուին Թուրք-ամերիկեան փոխադարձ մեղադրանքներն ու լարուածութիւնը:

Անգարայի մէջ ԱՄՆ դեսպան Ճոն Պասար Նախօրէին կանչուած է Թուրքիոյ ԱԳ նախարարութիւն անցած շաբաթ նախագահ Թայիփ էրտողանի Ուաշինգթըն կատարած այցի ժամանակ Թուրքիոյ դեսպանատան մօտ տեղի ունեցած արհեստագործ միջադէպի կապակցութեամբ:

Թուրքիոյ ԱԳ պաշտօնակա կաջը հրապարակման համաձայն, թրքական արտաքին գերատեսչութիւնը գրաւոր եւ բանաւոր դժգոհութիւն յայտնած է դեսպան Պասարին «ԱՄՆ անվտանգութեան ծառայութեան անձնակազմի կողմէ նախարար Մելուք Չառուչօղլուի թիկնապահներու նկատմամբ դրսեւորած դիւանագիտական կանոններուն հակասող, թշնամական պահուածքին վերաբերեալ»:

Թուրքիոյ ԱԳՆ-ն դեսպանին պահանջ ներկայացուցած է հետաքննել տեղի ունեցածը եւ հանդէս գալ համապատասխան յայտարարութեամբ:

«Ազգայնական շարժում» կուսակցութեան նախագահ Տեւլէթ Պահչեքին իր հերթին աջակցութիւն յայտնած է Թուրքիոյ ԱԳՆ-ի ԱՄՆ դեսպան Ճոն Պասարին ներկայացուած բողոքին՝ յայտարարելով, թէ սա թրքական պետութեան պատուի հարցն է:

Անցած շաբաթ նախագահ էրտողանի ԱՄՆ այցելութեան ժամանակ Ամերիկայի հայկական, քրտական, յունական եւ ասորական համայնքներու ներկայացուցիչները բողոքի ցոյց կազմակերպած էին Թուրքիոյ դեսպանատան մօտ: Էրտողանի աջակիցները, այդ

շարքին, ըստ ամերիկեան մամուլի, անոր թիկնապահի անդամները յարձակած էին խաղաղ ցուցարարներուն վրայ եւ ծեծի ենթարկած անոնց: Բռնութիւններու հետեւանքով 11 մարդ տուժած էր, երկու հոգի ձերբակալուած էր իրավախախտումներ թույլ տալու մեղադրանքով:

Թրքական ԱԳՆ-ի պնդմամբ՝ միջադէպը տեղի ունեցած է ամերիկեան համապատասխան մարմիններու կողմէ անվտանգութեան ապահովման համար անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելու հետեւանքով: Մինչդեռ ամերիկեան մամուլը կը գրէ, թէ էրտողանի թիկնապահները յարձակած են ցուցարարներուն վրայ:

Միջադէպէն ետք ԱՄՆ պետքարտուղարութիւնը իր խիստ մտահոգութիւնը փոխանցած էր Թուրքիոյ կառավարութեան, իսկ ԱՄՆ ծերակուտականի պաշտպանութեան հարցերով յանձնաժողովի ղեկավար, հանրապետական Մըքքէյնը նոյնիսկ կոչ ըրած էր ետ ուղարկել Թուրքիոյ դեսպանին:

Ըստ Associated Pressի, Թուրքիոյ դեսպանը կանչուած է Պետդեպարտամենտ եւ իր հետ հանդիպած Միացեալ Նահանգներու երկրորդ ամենաբարձրաստիճան դիւանագետը իր մտահոգութիւնը փոխանցած է Թուրքիոյ նախագահի թիկնապահներու կողմէ իրականացուած բռնութիւններու վերաբերեալ:

Տանըլտ Թրամբի վարչակազմը միաժամանակ ընդունած է, որ միջադէպէն ետք ձերբակալուած երկու Թուրք թիկնապահները կարճ ժամանակ անց ազատ արձակուած են:

Ի դէպ՝ նոր հրապարակուած տեսանիւթերուն մէջ կ'երեւի, թէ ինչպէս նախագահ էրտողան ծառայողական մեքենային հետեւած է արհեստագործութիւններուն, ապա շրջանցելով տարածքը՝ հեռացած:

Ս. Գացպանեան.- «Վեհափառի Յորդորը՝ Ուղղուած Արամ Աթէշեանին Իր Դրական Նպաստը Պիտի Բերէ»



Մայիսի 16-18 Մոսկուայի մէջ կայացած գերագոյն հոգեւոր խորհուրդի ժողովի ժամանակ վեհափառի յորդորը ուղղուած Արամ Աթէշեանին իր դրական նպաստը պիտի բերէ, Պոլսոյ պատրիարքի ընտրութիւնները տեղի պիտի ունենան, լրագրողներու հետ հանդիպման այս ենթագրութիւնը յայտնած է տարածաշրջանային հարցերով փորձագէտ-վերլուծաբան Սարգիս Հացպանեանը:

«Արդէն երկրորդ տարին է, որ Պոլսոյ պատրիարքարանում եղած խնդիրները խաղաղ ճանապարհով չեն կարողանում լուծել», - յիշատակած է ան՝ նշելով, որ Արամ Աթէշեանը երկու ոտքը դրել էր մէկ կողմի մէջ ու չգիտես ինչու չէր ցանկանում իր տեղը գիջել, եւ Պոլսոյ պատրիարք Մեսրոպ Մուրթաթեանի հանգստեան գնալուց յետոյ մինչ այսօր պատրիարքական ընտրութիւններ համայնքը չի կարողանում անցկացնել:

Սարգիս Հացպանեանը լիշեցրեց, որ ամիսներ առաջ Ամենայն հայոց կաթողիկոսը իրավիճակը շտկելու համար իր մօտ հրաւիրած էր Արամ Աթէշեանին, Գարեգին Պէքեանին եւ Սահակ Մաշալեանին: Հանդիպման արդիւնքով որոշուած էր, որ տեղապահ պէտք է ընտրուի՝ պատրիարքական ընտրութիւններուն ընթացք տալու համար: Որոշուած էր, որ տեղապահ ընտրութիւններէն յետոյ փոխանորդը պէտք է հրաժարական տայ: Սակայն, ինչպէս նկատած է Սարգիս Հացպանեանը, հակառակ որ տեղապահ ընտրուած է Գարեգին Պէքեանը, եւ ընտրութիւնները ճանչցուեցան վեհափառի կողմէ, Աթէշեան իր աթոռը չգիջեց:

«Արամ Աթէշեանը հերթական անգամ դէմ գնաց Մայր աթոռի

կայացրած որոշմանը», - նշած է ան:

Անոր խօսքով՝ Արամ Աթէշեանը չի կրնար հաշտուիլ այն եղելութիւններու հետ, որ անոր համայնքը չընդունիր, տեղապահ ընտրութիւններուն աւելի քիչ ձայներ տուին, համայնքը անոր պատարագները պոչքոթած է եւ այլն:

Միւս կողմէն ալ, անոր խօսքով, Պոլսոյ պատրիարքարանէն ներս տեղի ունեցածը Հայ առաքելական եկեղեցին, չհանդուրժեց: Սարգիս Հացպանեանը մատնանշեց, որ վերջին հոգեւոր խորհուրդի ժողովին յտակ որոշուած կայացուած էր Արամ Աթէշեանի հետ կապուած, որ ան պէտք է եկեղեցու կանոններուն հետեւի, խաղաղ ճանապարհով գիջի իր տեղը:

Սարգիս Հացպանեանին միայն գարմացուցած է ժողովի որոշման ձեւը, այն յորդոր էր կաթողիկոսի կողմէ ուղղուած Արամ Աթէշեանին, այնինչ ինքը կը սպասէր առաւել խիստ ձեւակերպումներու:

Հացպանեանի ներկայացմամբ՝ ինքը խօսած է Պոլսոյ իր ծանօթներուն հետ, իմացած, որ Արամ Աթէշեանի համար վեհափառի յորդորը նշանակութիւն պիտի ունենայ, ան ընդառաջ պիտի երթայ յորդորին, իբրեւ տեղապահ շուտով պիտի ձայնաւ Գարեգին Պէքեանին, եւ ընտրութիւնները պիտի կազմակերպուին յառաջիկայ տասը օրերուն:

Սարգիս Հացպանեանը բացառուած է, որ Թուրքիան միջամտէ Պոլսոյ պատրիարքարանի ընտրութիւններուն, աւելին, ըստ անոր, թրքական իշխանութիւնը կ'աջակցի անոր իրականացման: Իսկ Աթէշեանը, ընտրութիւններու արդիւնքով, էթէ առաջադրուի, ըստ անոր, մէկ ձայն նոյնիսկ չի ստանար:

Եւրոմիութիւնը Պատրաստ է

Շարունակուած էջ 1-էն

ամենամեծ միջազգային նուիրատուն, եւ պատրաստ ենք շարունակել աջակցութիւնը Հայաստանի մէջ իրականացուող բարեփոխումներուն, անոնց շարքին՝ տնտեսութեան զարգացման, առեւտուրի միջավայրի բարելաման, դատական համակարգի, մարդու իրաւունքներու ոլորտի, կաշառակերութեան դէմ պայքարի ուղղութեամբ: Հարցեր, որոնք շատ յստակ եւ հրատապ են Հայաստանի քաղաքացիներու համար», - հանդիպման աւարտին յայտարարած է

Մոկերինին՝ աւելցնելով. - «Մենք քննարկած ենք նաեւ Լեւոնային Ղարաբաղի խնդիրը: Եւրոմիութեան համոզմամբ՝ «ստատուս քո» անկայուն է, եւ անհրաժեշտ է հակամարտութեան շուտափոխութեան կարգաւորում՝ միջազգային օրէնքներու համաձայն: Եւրոմիութիւնը կը շարունակէ սատարել ԵԱՀԿ Մինսքի խումբի համախաղաղահարու առաջարկները»:

Պաշտօնակա Երեւանն ու Պրիւքսէլը երկու ամիս առաջ նախատրագրած են Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերու-

թեան նոր համաձայնագիր, որ, ըստ կողմերու, նոր էջ պիտի բանայ երկկողմ յարաբերութիւններուն մէջ:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան փոխանցմամբ՝ Մայիս 23-ին

Պրիւքսէլի մէջ ՀՀ-ԵՄ համագործակցութեան խորհուրդի 17-րդ նիստի մասնակիցները յոյս յայտնած են, որ համաձայնագիրը հնարաւոր կ'ըլլայ ստորագրել ԵՄ Արեւելեան գործընկերութեան պրիւքսէլեան գագաթնաժողովի ընթացքին:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանը Իշխանութիւններուն Յանձնարարած Է Պատշաճ Բուժօգնութիւն Ապահովել «Սասնայ Ճուղ»ու Անդամին

Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանը (ՄԻԵԴ) բաւարարած է անցած Յուլիսին ուստիկանութեան ՊՊԾ գունդի տարածքը գրաւած «Սասնայ ճուղ»ու անդամ Արամ Յակոբեանի փաստաբաններու դիմումն ու շարք մը յանձնարարութիւններ ուղարկած Հայաստանի կառավարութեան:

Ըստ այդմ, կառավարութիւնը պէտք է ապահովէ 59ամեայ կալանաւորի պատշաճ բուժօգնութիւնը եւ առանց ընդհատումներու անոր դեղորայք յատկացնէ ամբողջ կալանքի ընթացքին:

Փաստաբանները Եւրոպական դատարան դիմած էին՝ ահազանգելով, որ անոր նկատմամբ անմարդկային վերաբերմունք դրսեւորուած է՝ հիւանդ կալանաւորին շարունակած են առանց բուժման պահել ճաղերու ետին:

«Ազատութեան» հետ գրոյցի ընթացքին փաստաբան Տիգրան Եկոբեան ըսած է՝ այլ ճանապարհ, քան Եւրոպական դատարանն է, չունէին, քանի որ ամիսներ շարունակ իրենց ահազանգերը կ'անտեսուէին:

Փաստաբանը յիշեցուց, որ անցած փետրուարին «Սասնայ ճուղ»ու անդամը ուղեղի կաթուածի ախտանշաններով հիւանդանոց տեղափոխուած էր, եւ այժմ ալ անոր գլխուղեղը լաւ չի սնուցուիր. «Այդ պարտաւորութիւնների ձախողման արդիւնքում շատ աւելի մեծ, անդառնալի եւ կործանարար հետեւանքներ կարող են տեղի ունենալ Արամ Յակոբեանի համար»:

Եւրոպական դատարանը նաեւ նշած է, որ եթէ Հայաստանի կառավարութիւնը չկատարէ իր յանձնարարութիւնները, ապա այդ մէկը կը յանգեցնէ կառավարութեան կողմէ Եւրոպական կոնվենցիայի խախտման:

Եկոբեան ահազանգած է, որ Հինգշաբթի այցելած է բանտի մէջ պահուող գինուած խումբի անդամին, եւ տեղեկացած, որ բժիշկներու նշանակած դեղորայքը կրկին անոր հարազատները ուղարկած են: Մինչդեռ այդ մէկը պարտաւոր է քրէակատարողական վարչութիւնը ընել:

Եկոբեանի խօսքով, ոչ միայն չեն ապահոված հիւանդ կալանաւորի բուժումը, այլեւ կառավարութեան ներկայացուցիչը Եւրոպական դատարան ուղարկած դիրքորոշման մէջ կրկին պնդած է, որ



Արամ Յակոբեանը պատշաճ բուժօգնութիւն ստացած է. «Կառավարութեան ներկայացուցիչը մեր կողմից ներկայացուած որեւէ փաստ չի ընդունել ու հաւաստիացրել է դատարանին, որ Արամ Յակոբեանը ստանում է պատշաճ բուժում եւ ստանում է անհրաժեշտ դեղորայքը: Դատարանը հիմք չի ընդունել այդ հաւաստիացումները»:

Արդարադատութեան նախարարութեան ներկայացուցիչ Լուսինէ Մարտիրոսեան «Ազատութեան» հետ գրոյցի ընթացքին ըսած է, որ Եւրոպական դատարանի որոշումը ուղարկած են քրէակատարողական վարչութիւն. «Այդ նոյն օրը որոշումն ուղարկուեց Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը՝ այն ապահովելու համար: Արդարադատութեան նախարարութիւնն այդ որոշման հիման վրայ գրութիւն է ուղարկել Քրէակատարողական վարչութիւն՝ Յակոբեանի համար պատշաճ բուժօգնութիւն եւ առանց ընդհատումների անհրաժեշտ դեղորայք ապահովելու համար»:

Անցած ամրան գինուած ապստամբութեան փորձ կատարած խումբի անդամ, ընդդիմադիր Հիմնադիր խորհրդարանի Շիրակի կառուցի դեկավար Արամ Յակոբեանը նախապէս երկու վիրահատութիւն տարած է, որմէ մէկը գլխուղեղի մէջ ուռուցքի հեռացումն է՝ եղած է 2014ին:

Քրէակատարողական վարչութեան «Ազատութեան» փոխանցած են, որ Յակոբեանի վիճակը կը գնահատուի բաւարար: Եւրոպական դատարանի որոշումն յետոյ Յակոբեան ենթարկուած է անվճար համալիր հետազօտութեան, ան 12 ապրիլին կը գտնուի բժիշկներու

Ծիծեռնակաբերդի մէջ Յարգանքի Տուրք Մատուցուած Է Պոնտոսի Յոյներու Յեղասպանութեան Զոհերու Յիշատակին



National Assembly of the Republic of Armenia www.parliament.am

Աժ նախագահի տեղակալ Էսուարտ Շարմազանով, Հանրապետական խմբակցութեան քարտուղար Գագիկ Մելիքեան, պատգամաւոր Մարգարիտ Եսայեան, ՀՀի մէն Յունաստանի Հանրապետութեան դեսպանատան ներկայացուցիչներ, Հայաստանի մէջ յունական հասարակական կազմակերպութիւններու միութեան նախագահ Արկարի Խիտարով, հոգեւոր դասի եւ Հայաստանի յունական համայնքի ներկայացուցիչներ այցելած են Ծիծեռնակաբերդ:

Աժ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան հաղորդմամբ, ներկաները ծաղիկներ դրած են անմար կրակի մօտ եւ խոնարհուած ու լուռութեամբ յարգած են Փոքր Ասիոյ տարածքին 1915-1923թթ. Օսմանեան Թուրքիոյ կողմէ Պոնտոսի յոյներու նկատմամբ իրականացուած ցեղասպանութեան անմեղ զոհերու յիշատակը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տէր Նաթան արքեպիսկոպոս Յովհաննիսեանը կատարած է հոգեհանգիստի կարգ անմեղ զոհերու հոգու հանգստութեան համար:

«Այսօր նաեւ վերածննդի օր է: Հայաստանի իշխանութիւններն ամէն ինչ անելու են քրիստոնեայ ժողովուրդների ցեղասպանութեան միջազգային դատապարտման ուղղութեամբ, եւ մենք պէտք է միաւորենք մեր ջանքերը, որովհետեւ ցեղասպանութեան ժխտումը նոյն-

հակողութեան տակ: Արամ Յակոբեանը կը մեղադրուի Ոստիկանութեան ՊՊԾ գունդի գրաւման գործով կազմա-

քան վտանգաւոր է, որ քան ցեղասպանութիւն կատարելը», ըսած է է. Շարմազանով:

1994 թուականին Յունաստանի խորհրդարանը ճանչցած եւ դատապարտած է Պոնտոսի 600 հազարէ աւելի յոյներու ցեղասպանութիւնը: Փրկուելով թրքական եթիոպոլիսի անոնցմէ շատերը ապաստան գտած են Հայաստանի մէջ եւ ներգրաւուած մեր երկրի սոցիալաւնտեսական ու քաղաքական կեանքին մէջ:

Հայաստանի մէջ յունական հասարակական կազմակերպութիւններու միութեան նախագահ Արկարի Խիտարովը խորհրդանշական համարած է Հայոց մեծ եղեռնի յուշակոթողին մօտ Պոնտոսի յոյներու՝ իր հայրենակիցներու յիշատակի խնկարկումը, քանի որ հայ ժողովուրդը առաջինը ենթարկուած է եղեռնի: Դատապարտելով ցեղասպանութիւնը իրականացնողը՝ ան յոյս յայտնած է, որ յառաջիկային աշխարհի առաջադէմ մարդկութիւնը կը ճանչնայ եւ կը դատապարտէ Փոքր Ասիոյ տարածքին 1915-1923 թթ. թուականներուն քրիստոնեաներու հետ տեղի ունեցած ողբերգութիւնը:

Պոնտոսի յոյներու ցեղասպանութիւնը ճանչցած եւ դատապարտած են Հայաստանը, Յունաստանը, Կիպրոսը, Շուէտը եւ Արցախի Հանրապետութիւնը:

կերպուած խումբի կողմէ ապօրինի գէնք, գինամթերք կրելու, պահելու եւ փոխադրելու եւ շէնք, շինութիւններ գաւթելու մէջ:

Bedros S. Maronian 818/500-9585

Siamanto B. Maronian 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

« ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԵՆ

25 ՏԱՐԻ ԱՆՑ »

ԸՆԿ. ՀԱՄԲԻԿ ՍԱՐԱՖԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՄԵՋ



Հայ Ամերիկեան Խորհուրդի Լաս Վեկասի մասնաճյուղը համագործակցաբար ՄԴ-ՀԿ Հայկ Բժշկեան մասնաճյուղին, հրապարակային ասուլիս մը կազմակերպած էին տեղույն Ս. Կիրակոս Հայց. Առաք. Եկեղեցուց Թաճարեան սրահին մէջ, որուն նիւթն էր « Հայաստանը, անկախութեան հռչակումէն 25 տարի անց »:

Ընտրանի հասարակութեան մէջ կը նշմարուէին Ս. Կիրակոս Եկեղեցուց Ժրջան հովիւ Հոգ. Տ. Սասուն Ծ. Վրդ. Զմբուխտեան, Լաս Վեկասի Հայաստանի հիւպատոս Ատրուշան Արմէնեան, Ծխական Խորհուրդի ատենապետ Կարէն Սեղանեան, եւ այլ շրջաններէ եկած հիւրեր:

Օրուան հանդիսավար ՄԴ-ՀԿ Հայկ Բժշկեան մասնաճյուղի ատենապետ ճորճ Յակոբեան իր բացման խօսքին մէջ ողջունեց ներկայ հասարակութիւնը եւ խնդրեց մէկ վայրկեան յտանկա լուծեամբ յարգել մասնաճյուղի հիմնադիրներէն Կէրի Սինանեանի յիշատակը, որուն անակնկալ մահը խոր յուզում պատճառած էր բոլորին:

Սրտի խօսքով հանդէս եկաւ ՄԴ-ՀԿի Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի փոխ ատենապետ Գաբրիէլ Մոլոյեան: Ան իր գնահատանքն ու անխառն ուրախութիւնը յայտնեց որ հետզհետէ առաւել եւս կը կազմակերպուի շրջանի հայ գաղութը, նորահաստատ եկեղեցիով ու յարակից կառուցներով: Այնուհետեւ ներկաներուն ծանօթացուց օրուան բանախօսը՝ ՄԴ-ՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Տօքթ. Համբիկ Սարաֆեանը:

Լաս Վեկասի Ս. Կիրակոս Եկեղեցուց կից Թաճարեան շքամբարանի աշակերտներուն կողմէ ներկայացուեցաւ հայրենասիրական արտասանութիւններու փունջ մը: Համապարփակ ելոյթով մը հանդէս գալով Տօքթ. Համբիկ Սարաֆեան անդրադարձաւ սովետական շրջանի Հայաստանի եւ Արցախի իրավիճակի առանձնաշատկութիւններուն եւ ապա կոմունիզմի փլուզումէն ետք նորանկախ Հայաստանի դիմակալած դժուարութիւններուն, որոնց ամենահիմնականը տնտեսական դրութիւնն էր:

Իր մեկնաբանութեամբ տնտեսութիւնը տասնապատիկ վատ պիտի ըլլար, եթէ դուրսէն եկած նպաստներու փոխանցումները չըլլային: Այսուհանդերձ ներկայիս Հայաստանի արտաքին պարտքը աստղաբաշխական թիւերու հասած է: Իսկ օլիգարխներն այսօր պետութեան զարգացման խոչընդոտներն են: ԱՄՆ-ի մէջ ալ նման դրոյթներ կան... սակայն Հայաստանի պարագան տարբեր է: Հ. Սարաֆեան իր խօսքը շա-

րունակելով ըսաւ. Դժբախտաբար այսօր իրավիճակի փոփոխութիւնն չկայ: ԱՄՆ-ի մէջ միջին խաւն է որ կը զարգացնէ երկիրը: Իսկ Հայաստանի մէջ միջին դասակարգը շատ փոքր է: Եթէ պայմաններն այս ձեւով շարունակուին՝ հետեւանքը աւելի ծանր պիտի ըլլայ, արտադրութիւն պիտի շարունակուի եւ վտանգն ալ՝ իր հետը...:

Յարգելի բանախօսն անդրադարձաւ նաեւ երկրի արտաքին քաղաքականութեան վրայ: Պատկան մարմինները չի կրցան դասաւորել ձեւաւորուած արտաքին քաղաքականութիւնը, որուն հետեւանքով ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի անդամ դարձաւ Ատրպէյջանը:

Խօսելով 1999 Հոկտ. 27ի դէպքերուն մասին ըսաւ թէ պետութիւնը շրջադարձ կատարեց սխալ ուղղութեամբ: Իսկ անդրադառնալով ընտրական գործընթացին եւ խորհրդարանական համակարգի իրավիճակի հարցին նշեց « Ոչ մէկ տարբերութիւն նախկինի եւ ներկայի միջեւ... »:

Տօքթ. Համբիկ Սարաֆեան եզրակացնելով իր ելոյթը հետեւեալ անհրաժեշտ նշումները կատարեց.

ա. Օրէնքի գերակայութիւնը հաստատել:

բ. Գործնապէս պայքարիլ օլիգարխիայի դէմ:

գ. Տնտեսական լուրջ քաղաքականութիւն մշակել:

դ. Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու համակարգում: Այդ պարագային հեռանկարը շատ աւելի փայլուն կ'ըլլայ:

Հայաստանի ներկայ սերունդը գիտակից է իր առաքելութեան եւ ի վիճակի է փայլուն ապագայի մասին խօսելու:

Աւարտին ելոյթ ունեցաւ հիւպատոս Ատրուշան Արմէնեան եւ դրուատեց Լաս Վեկասի հայ գաղութի միասնութիւնն ու տասը գործող կազմակերպութիւններու միջեւ տիրող համերաշխ գործընթացը:

Հայր Սասուն Ծ. Վրդ. խօսք առնելով իր ուրախութիւնը յայտնեց տիրող համագաղութային միասնական, աշխատանքներու մասին, յատկապէս ազգային եւ մշակութային բնագաւառներու մէջ:

Ատենապետ ճորճ Յակոբեանի շնորհակալական խօսքերով վերջ գտաւ սոյն միջոցառումը: Այնուհետեւ ներկաները հիւրասիրուեցան Տիկնանց Յանձնախումբի կողմէ պատրաստուած ուտեստներով, ստեղծելով ընկերահամակրական հաճելի մթնոլորտ մը:

Կը շնորհակարտենք ՀԱԽ-ն ու սոյն միջոցառումի կազմակերպիչները, մաղթելով նորանոր յաջողութիւններ:

ՀԱՄԵՐԳ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅ ՄՕՐ



Հայկական Հոգևոր Մշակութային Հիմնարկի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ երաժշտական համերգ, նուիրուած հայ մօր Շաբաթ, Մայիս 13, 2017- ին, Կլէնտէյլ քաղաքի first congregational church- ի սրահէն ներս:

Համերգին իրենց մասնակցութիւնը բերին գաղութի սիրուած արուեստագէտներ, որոնք իրենց կամաւոր մասնակցութեամբ ստեղծեցին գեղեցիկ պահեր, վեր առնելով հայ երգն ու արուեստը: Հիմնարկը իր Աստուածահաճոյ եւ մարդասիրական առաքելութեամբ կ'օժանդակէ անկարին ու կարիքաւորին, հայ ուսանողին ու հայ ընտանիքին:

Ժագ ճամսաքեան բացման խօսք կատարեց, շեշտելով հիմնարկին կարեւորութիւնն ու նպատակը: Բարձրորակ կատարումներով հանդէս եկան Անի Քերոբեան, Արփի Այնթապեան, Արա Տաքսեան, Արաք Պետրոսեան, Նորա Հինթիլեան Բուրլ, Ալիք Արթինեան (ասմունք) եւ Վրոյր Տէմիրճեան:

Արդարեւ, Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան, այս քաղաքի հայութեան համար օրհնութիւն մը եղած է: Մեր գաղութի կրթական կեանքի կազմակերպման, ձեւաւորման և արդիւնաւորման գլխաւոր ղեկավարներէն մին է:

Մաշտոց Գոլէճի 25-ամեակի ծառայութիւնները, որոնք եղան վարձու շէնքերու մէջ, ցարդ չունեցաւ բարերար մը, կամ ազգային հաստատութիւն մը որ նուիրատուութեամբ մը կարենայ այս գոլէճը մնայուն շէնքի մը մէջ տեղաւորել, որպէսզի մեր հայ երիտասարդ-երիտասարդուհիները աւելի մեծ թիւով կարենան օգտուիլ այս գոլէճէն: Յարգ չեղաւ, բայց բնաւ ուշ չէ, միշտ կարելի է



յուսալ և սպասել այդ երջանիկ օրուն, որ նման բարերար մը օգնութեան ձեռք երկարէ այս պատուաբեր գոլէճին:

Մաշտոց Գոլէճի մատուցած ծառայութիւններուն նոյնիսկ արագ թուումն իսկ գլխապատոյտ կը պատ-

ճառէ, և այս բոլորը եղած են Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի ղեկավարութեամբ և տեղագրին աշխատանքով: Գոլէճը 25 տարուան ընթացքին ունեցած է 7065 ուսանողութիւն, որուն 7034ը՝ 96%ը աշխատանքի տեղաւորուած է. պաշտօնէութիւն՝ 28, պատուոյ դասախօսներ՝ 5, համանքային ձեռնարկներ՝ 168. գոլէճին ստացած գնահատագրերը՝ 112, հեռուստացոյցի ծրագրերը՝ 2,276, պատուոյ փրօֆեսորի կոչում՝ 16, այցելուներ, տեղական՝ 4,064, միջազգային այցելուներ՝ 988 եւ այլն:

Ինչպէս ըսինք, գոլէճը իր կրթական և համայնքային ծառայութեամբ, մշտատեւ ներկայութիւն մըն է մեր գաղութէն ներս: Պողտու հաստաբուն կաղնի մըն է այս հաստատութիւնը, որուն պտուղները հազարաւոր հայ երկսեռ երիտասարդներ վայելած են:

Փառք և հազար պատիւ մեր ժողովուրդի ծոցէն ծնած և անոր ծառայութեան լծուած մեր Մաշտոց Գոլէճին: Լոս Անճելոսի հայութեան կեանքին մէջ ծաղկուն, գեղեցիկ պարտէզի մը հրաշքն է Մաշտոց Գոլէճը, որ Աստուծոյ օգնութեամբ է որ 25 տարի գոյատեւեց և կը մաղթենք անոր որ նորանոր ամեակներ եւս շարունա-

կէ իր ծառայութիւնները, գլխաւորութեամբ մեր շատ սիրելի բարեկամ, մեծահմուտ կրթական մշակ և գլխազիր մարդ՝ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանը:

Կարելի չէ այս գրութիւնը վերջացնել առանց մեր սրտագին շնորհաւորութիւնները յայտնելու Մաշտոց Գոլէճի հիմնադիր և 25 տարիէ ի վեր նախագահ՝ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանին:

Արդարեւ, մեր սիրելի մեծաբալը 17 տարեկանէն նուիրուած է կրթական գործին և Միացեալ Նահանգներու մէջ իր 40 տարիներու ծառայութեան ընթացքին ունեցած է 10,000է աւելի ուսանողներ, որոնց մեծ մասին ներշնչման աղբիւր եղած է: Իր համալսարանական ուսումը ստացած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ, իսկ դոկտորական վկայականը Ա.Մ.Ն. Northwestern աշխարհահռչակ համալսարանէն: Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան արժանացած է 5 Պատուոյ դոկտորական վկայականներու և 9 փրօֆեսորական կոչումի: Վարչական անդամ և ղեկավարութեան մէջ է կրթական, բարեսիրական մօտ 11 միութիւններու: Ատենապետն է Լոս

Շար.դ էջ 19

ՄԱՇՏՈՅ ԳՈԼԵԹ 25-ԱՄԵԱԿ
ԴՈԿՏ. ԿԱՐՊԻՍ ՏԵՐ ԵՂԻԱՅԵԱՆ՝ 40-ԱՄԵԱԿ
 Proudly Celebrating the 25th Anniversary of the Founding of Mashdots College and Dr. Garbis Der-Yeghiayan's 40 Years of Unparalleled Service and Leadership to Higher Education
 Organized by: The Board of Trustees, the Alumni, and the Ladies Auxiliary of the College

DINNER - BANQUET CELEBRATION
 Sunday, June 4, 2017, 5:00 P.M.
 Phoenicia Banquet Hall
 343 N. Central Avenue (at Lexington) • Glendale, California (by reservation) Please call: 818.548.9345

CONCERT - CELEBRATION & DEDICATION OF DR. DER-YEGHIAYAN'S
 Recently-Published Photo-Album
"VOICES IN SILENCE"
 My Heart Cried, My Soul Cried, My Body Cried
 Sunday, June 11, 2017, 5:00 P.M.
 Pasadena Armenian Church of the Nazarene
 1500 E. Washington Blvd. • Pasadena, California (open to the public)
 For further information: Mashdots College (818) 548-9345 • E-Mail: mashdots@aol.com

WE ARE PROUD OF THE 25-YEAR ACCOMPLISHMENTS OF THE COLLEGE:
 STUDENT ENROLLMENT: 7,065 • ALUMNI: 7,034 • JOB PLACEMENT: 96% • FACULTY: 28 • HONORARY FACULTY: 5
 COMMUNITY EVENTS: 168 • PRESS RELEASES: 474 • PROCLAMATIONS AWARDED TO THE COLLEGE: 112 • TV PROGRAMS: 2,768
 PUBLICATIONS: 21 • PILGRIMAGES TO ARMENIA AND WESTERN ARMENIA: 12 • HONORARY PROFESSORSHIPS: 16
 HONORARY DOCTORATES: 12 • VISITORS: LOCAL - 4,064, INTERNATIONAL - 988



ԹՐԲԵՐԵՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԻԶՄԻՐԻ ՀԱՅԵՐԸ»


«Իզմիրի հայերը» գիրքը արժեքավոր աղբյուր մըն է՝ աւելի լաւ ընկալելու համար իզմիրի անցեալն ու ներկան...

Իրապէս կայի՞ն զմիւռնահայերը: Կայի՞ն, շնչեցի՞ն, քալեցի՞ն, վագեցի՞ն, ծնա՞ն ու մեռա՞ն երկրի վրայ դրախտը յիշեցնող եզակեանի այս ափերուն վրայ: Այս հարցումներուն դժուար է «Այո՛, ապրեցա՞ն, կայի՞ն» պատասխանել՝ դիտելով Թուրքիոյ ամենամեծ ու յատուկ քաղաքներէն մէկուն՝ իզմիրի մէջ ու անոր շրջակայքին դարերու անցեալ ունեցող իրենց կեանքէն մնացած եւ գրեթէ ոչնչացած հետքերը: Բացի քանի մը խղճամիտ մասնագէտէ, Թուրքիոյ մէջ իզմիրի վերաբերեալ ուսումնասիրութիւններուն մէջ ալ կացութիւնը տարբեր չէ: Ըստ բազմաթիւ թրքական աղբիւրներու, անոնք բացի 1922-ի Զմիւռնիոյ հրդեհին պատճառը ըլլալէ, ուրիշ ոչ մէկ դեր կատարած են քաղաքի պատմութեան մէջ: Զկային, եւ ետքը իրենց թաղամասը հրդեհեցին եւ նաւարկելով հեռացան:

«Իզմիրի հայերը» գիրքը ի մի կը բերէ յօդուածներ, որոնք այս գեղեցիկ քաղաքին ու անոր շրջակայքի կարգ մը բնակավայրերուն պատմութիւնը կը քննեն հայերու բնակութեան դիտանկիւնէն եւ առհասարակ հայկական աղբիւրներու հիման վրայ: Հայերուն քաղաքին մէջ ունեցած դիրքը, իրենց եկեղեցիները, դպրոցները, հիւանդանոցը, տպարանները, մամուլը եւ նման հաստատութիւնները, ճարտարապետութիւնը, արուեստները, առեւտրային կեանքէն ներս դերակատարութիւնը, հարեւան ժողովուրդներու հետ յարաբերութիւնները, նոյնիսկ տարազները կը քննուին լուսանկարներու ալ օգնութեամբ՝ նպատակ ունենալով դիւրացնել հասկնալու զմիւռնիացիի ինքնութիւնը կրելու վիճակը: Ինչպէս նաեւ կը ձգտի ծանօթացնել կարգ մը սկզբնաղբիւրներն ու քննարկումները բոլոր անոնց, որոնք հետաքրքրուած են քաղաքի պատմութեամբ, գլխաւորաբար նորօրեայ իզմիրի մէջ բնակող իրենց հայրենակիցները:

Քաղաքները վայրեր են, որոնք բնականաբար ի մի կը բերեն իրարու նմանող կամ իրարմէ տարբերող, յամենայնդէպս հասարակաց տարածք ու միասնական մշակոյթ բաժնող մարդիկը: Անցեալին միասնաբար ապրելու առիթը թերեւս վրիպած է մեզմէ, ինչ որ արգելք մը չէ անցեալը դիտելով կարգ մը հետեւանքներ բանաձեւելու համար: «Իզմիրի հայերը» գիրքը այս առումով արժեքավոր աղբիւր մըն է: Աւելի լաւ ընկալելու համար իզմիրի անցեալն ու ներկան...

Ձաքարիա Միլտանօղլու
Ծնած է 1950-ին, Կեսարիոյ էքրեք (Քէօփրիւպաշը) գիւղը: Նախակրթութիւնը ուսանած է Գարակէօզեան որբանոցի, միջնակարգն ու լիսնն ալ՝ Ս. Նաչ Դպրեմանքի մէջ: Բարձրագոյն



կրթութիւնը ստացած է Ստանպուլի թեքնիքական համալսարանէն՝ վկայուելով որպէս ճարտարապետ: Համալսարանական տարիներուն աշխուժօրէն մասնակցած է ուսանողական շարժումներուն եւ Թուրքիոյ Բանուորական կուսակցութեան ձեռնարկներուն: 1976-ին մտաւ Թուրքիոյ Համայնավարական կուսակցութեան շարքերէն ներս: Սեպտեմբեր 12-ի շրջանին Թուրքիոյ Համայնավարական կուսակցութեան դատավարութեան արդիւնքին ձերբակալուեցաւ ու բանտարկուեցաւ 3 տարի:


Որպէս ճարտարապետ կեանքի կոչած է Քուզլունճուքի օդակազի գործարանի, որ առաջինն է Թուրքիոյ մէջ, «Շել» ընկերութեան Թուրքիոյ կեդրոնատեղիի կառուցումը, Օր-



թագիւղի Անտոնեան միաբանութեան եւ Պէշիկթաշի Ս. Աստուածածին եկեղեցւոյ վերանորոգումն ու նման նախագիծեր: Որպէս Թուրքիոյ հայոց պատրիարքութեան դիտորդ՝ մասնակցած է Աղթամարի Ս. Նաչ եկեղեցւոյ վերանորոգութեան աշխատանքներուն: 2012-ին Երեւանի պիէնսալին ներկայացաւ Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցւոյ վերանորոգման նախագիծով եւ արժանացաւ մրցանակի:

2008-2011 թուականներուն սիւնակագիր էր «Ակօս»ին մէջ: Հայկական արուեստի, Անատոլուի հայկական բնակավայրերու, հայկական մամուլի ու հրատարակչական պատմութեան վերաբերեալ բազմաթիւ դասախօսութիւններ սարքած ու

ԱՄՍԱՆԻ ՄԵՋ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԱԾ Է ԳԵՌՈՐԳ ՄՍԸՐԼԵԱՆԻ «ԸՐՊԵՏԻ ԵՒ ՀԻՄՆԱՅԻՆ ՅՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՅԵՐԸ» ԱՐԺԵՔԱՒՈՐ ՀԱՏՈՐԸ



Օրերս Յորդանանի մայրաքաղաք Ամմանի մէջ լոյս տեսաւ հետազօտող եւ հասարակական գործիչ Գեորգ Մսըրլեանի նոր հատորը՝ «Ըրպէտի եւ Հիւսիսային Յորդանանի Հայերը» վերնագրով: Գիրքը հրատարակուած է արաբերէն եւ անգլերէն լեզուներով, եւ լոյս սփռած է Ըրպէտ քաղաքի եւ Հիւսիսային Յորդանանի մէջ Հայ համայնքի ծագման, աճման, զարգացման եւ նուազման նիւթերուն վրայ:

Գիրքը ներկայացուցած է Հիւսիսային Յորդանանի հայերու ընկերային, տնտեսական, մշակութային եւ հոգեւոր կեանքի տարբեր շերտերը՝ 1915 թուականէն սկսեալ մինչեւ մեր օրերը: Այն նաեւ ամփոփած է հայերու յարատեւ եւ ամէնօրեայ պայքարը՝ լեզուի, մշակոյթի, կրօնի եւ պատմութեան պահպանման համար, ինչպէս նաեւ ընդգծած է հայերու դերը քաղաքի՝ մշակութային, առեւտրական, արդիւնաբերական եւ գիւղատնտեսական ոլորտներու զարգացման գործին մէջ, հաշուի առնելով, որ քսաներորդ դարի սկիզբէն սկսեալ, հայերը կը հանդիսանան քաղաքի հասարակութեան հիմնական բաղադրիչներէն մէկը:

Գիրքը լուսաբանած է Ըրպէտի հայերու յարաբերութիւնները Յորդանանի, Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի մէջ գտնուող հայ համայնքներու հետ, շեշտը դնելով Ամման մայրաքաղաքին մէջ գտնուող հայկական հիմնարկներու եւ հայկա-



կան եկեղեցւոյ հետ ունեցած յարաբերութիւններուն վրայ:

Գիրքը կը պարունակէ նաեւ փաստաթուղթերու եւ պատկերներու մեծ հաւաքածոյ, որ ընթերցողին կ'օգնէ պատկերացում կազմել ձեւաւորել գիրքի մէջ տեղ գտած պատմական փաստերու մասին:

Ներկայիս հեղինակը մտադիր է գիրքի շնորհահանդէսը կազմակերպել համազործակցութեամբ Յորդանանի Մշակոյթի Նախարարութեան հետ, որպէսզի գիրքը հնարաւորին չափ մեծ թիւով ընթերցողներու հասանելի դառնայ, մասնաւորապէս արաբական եւ յատկապէս յորդանանեան գրադարանները չունին նման գիրքեր: Մսըրլեանի Ըրպէտ քաղաքի հայերու մասին պատմող սոյն հատորը իր տեսակին մէջ եզակի եւ արժեքավոր հատոր մըն է:

ԹԵ ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ

Շարունակուած էջ 13-էն

եղաւ՝ յանուն պատմական արդարութեան: Տեսնու՞մ ես, Հայաստան, բնակավայրերդ էլ որդիներդ նման յամառ են եւ ուժեղ:

Շնորհակա՛լ եմ Քեզ՝ պատերազմի սերունդ, որ այդքան արհաւիրքն ու սարսափը ուսերիդ կրած յամուօրէն քայլեցիր դէպի յաղթանակ՝ չնահանջելով

գիտաժողովներու մասնակցած է Թուրքիոյ, Ամերիկայի ու Եւրոպայի զանազան քաղաքներուն մէջ: Այս ոլորտէ ներս ունեցած իր երկարամեայ վաս-

երբեք, շնորհակա՛լ եմ, որ ինձ արժանացրիր յաղթանակի սերունդ կոչուելու պատուին, պարգեւեցիր ապրելու, հպարտանալու եւ ազատ ճախրելու իրաւունք:

Գիտե՞ս, հիմա ես հեռու եմ քո ազատագրած երկրից, բայց քո շնորհիւ մոլորակի այս կէտում էլ քայլում եմ գլուխս բարձր եւ հպարտ. չէ՞ որ ես քո յաղթանակի սերունդն եմ...

տակը պսակած է «Հայ պարբերական մամուլը 1794-2000» հատորով, որ հրատարակուած է 2014-ին, «Արաս» հրատարակչատան կողմէ:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍԸ ԱՐՑԱԽԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՄԵԿՆԱՐԿԱԾ Է ՀԱՇՈՒԵՏՈՒ ԱՅՑԵՐԸ



Հոգաբարձուներու խորհուրդի ամենամեայ նիստին ծիրին ներս՝ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի պատուիրակութիւնը՝ գործադիր տնօրէն Արա Վարդանեանի գլխավորութեամբ, Մայիս 20-էն սկսեալ կ'իրականացնէ շարք մը հաշուետու ձեռնարկներ, ներառեալ՝ ենթակառուցուածքներու բացումներ եւ այցեր հայաստանեան ու արցախեան ծրագիրներ:

Պատուիրակութիւնը կազմուած Հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդի անդամներէ, տեղական մարմիններու ներկայացուցիչներէ, բարերարներէ, աշխատակիցներէ, Մայիս 20-ին մեկնեցաւ Արցախ՝ ծանօթանալու հաշուետու տարուան ընթացքին աւարտած եւ ընթացիկ ծրագիրներուն: Ծուրջ 45 հոգիէ կազմուած խումբը Արցախ ուղեւորուեցաւ Վարդենիս-Մարտակերտ մայրուղիով, որուն վերակառուցումը պիտի աւարտի այս աշնան:

Այցելութեան առաջին օրը՝

դրուած բեմը հնարաւորութիւն պիտի տայ տարաբնոյթ ձեռնարկներ իրականացնելու այստեղ: Ֆրանսաբնակ մեր հայրենակիցներու հանգանակութիւններով՝ վերջին տարիներուն նման կեդրոններ կեանքի կոչուած են Արցախի տասներկու համայնքներու մէջ՝ առաւել յարմարաւէտ ու յազեցած դարձնելով ընդհանուր 7700 բնակիչի առօրեան:

Մայիս 21-ին, պատուիրակութիւնը հանդիսաւոր պայմաններու մէջ բացաւ եւ երկու համայնքային կեդրոն Արցախի մէջ՝ Քիւրաթաղ (Հադրութի շրջան) եւ Սարգսաշէն (Մարտունիի շրջան): Ժամանակակից յարմարութիւններով համալրուած այս նորակառուցները նոյնպէս ֆրանսահայրուհուներն են արցախցի մեր հայրենակիցներուն: Կեդրոններուն կառուցման համատեղ նիւթական աջակցութիւն ցուցաբերած է Արցախի Հանրապետութեան կառավարութիւնը: Վերջին տարիներուն ֆրանսահայրու աշխոյժ



Հիմնադրամի պատուիրակութիւնը հանդիսաւորութեամբ բացաւ Վարդենիս-Մարտակերտ ճանապարհին հարող Կոճողոտ համայնքի (Մարտակերտի շրջան) նորակառուց համայնքային կեդրոնը, որուն կառուցումը հովանաւորած է Հիմնադրամի Ֆրանսալի տեղական մարմինը՝ Արցախի Հանրապետութեան կառավարութեան նիւթական համատեղ աջակցութեամբ: Արդէն իսկ կահաւորուած կեդրոնին մէջ այստեղեան պիտի գործեն գիւղապետարանը, բժշկական կեդրոնը, գրադարանը, խաղասենեակը եւ հանդիսութիւններու սրահը իր խոհանոցով: Սրահին մէջ տեղա-

մասնակցութիւնը Արցախի մէջ ենթակառուցուածքներու իրականացման մեծ գնահատանքի կ'արժանանայ արցախցիներու կողմէ:

Մայիս 22-ին, Հիմնադրամի պատուիրակութիւնը եղաւ Ստեփանակերտի թիւ 9 դպրոց, որուն վերակառուցումն ու արդիականացումը կը հովանաւորէ Հիմնադրամի ԱՄՆ արեւմտեան շրջանի տեղական մարմինի հովանաւոր ձեռնարկ թրփանձեանը, որուն միջոցներով Արցախի մէջ կ'իրականացուին նաեւ այլ ենթակառուցուածքային ծրագիրներ: Ասիկա Ստեփանակերտի


ՎՐԱՍՏԱՆԻ ՇԱՄԽՈՐԵՑՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԱՆԳՆԱԾ Է ՓԼՈՒԶՄԱՆ ՎՏԱՆԳԻՆ ԱՌՋԵՒ



ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

«Կը վախնամ փողոցը երկար ժամանակ կանգնելու: Ծատ հաւանական է, որ իմ կանգնած տեղս ալ շէնք մը կառուցեն»։ այս գրառումը կը պատկանի վրացի աքթիվիստի մը, որ իր բողոքը արտայայտած է Հաւլաբար թաղամասին մէջ կատարուող շինարարութեան դէմ: Այդ շինարարութեան հետեւանքով է նաեւ, որ 18-րդ դարու սկիզբը կառուցուած Շամխորեցոց պատմական եկեղեցին կրնայ վերջնականապէս խոնարհիլ: Ծամխորեցոց մէկն է այն վեց եկեղեցիներէն, որոնք «վիճելի» եկեղեցի կը համարուին:

Այս խնդիրին վերաբերեալ յատուկ աշխուժութիւն մը սկսաւ երեւիլ, երբ մէկէ աւելի վրացական լրատուական կայքեր սկսան գրել Թիֆլիսի «Հաւլաբար» (մօտիկ անցեալին Թիֆլիսի հայութեան սիրտը համարուող թաղամաս) թաղամասին մէջ կիսաքանդ վիճակի մէջ գտնուող Շամխորեցոց եկեղեցւոյ փլուզման վտանգին մասին:



Սուրբ Աստուածածին Շամխորեցոցը (կ'անուանուի նաեւ «Կարմիր Աւետարան») կամ Շամքորեցոց Սուրբ Աստուածածին եկեղեցի) կառուցուած է 1735 թուականին (կարգ մը աղբիւրներու համաձայն 1785-ին), Շամխոր քաղաքէն այդ շրջան տեղափոխուած հայերու ձեռամբ: Նշենք, որ հայերով բնակեցուած Շամխոր քաղաքը ներկայիս կը գտնուի Ատրպէյճանի հիւսիս-արեւմտեան հատուածին մէջ եւ Թիֆլիս-Եւլախ մայրուղիին մօտ: Շամխորի բնակչութիւնը աչքի ինկած է իր ռազմական ունակութիւններով եւ արիւթեամբ, յատկապէս 1800-ականներու սկիզբը տեղի ունեցած ռուս-թրքական պատերազմին ընթացքին, երբ շրջանի

հրամանատարն էր հայազգի գորավար Վալերիան Մատթեովը:

Վերադառնալով մեր նիւթին, յայտնենք, որ Շամխորի եկեղեցին կիսափուլ վիճակի մէջ յայտնուած է 1989-էն սկսեալ: Իսկ այսօրուան դրութեամբ, եկեղեցին յայտնուած է ամբողջութեամբ փուլ գալու վտանգին առջեւ: Խնդիրն այն է, որ վրացական «Հորիզոն» շինարարական կազմակերպութիւնը, դիմելով շրջանի քաղաքապետարան, յաջողած է ձեռք ձգել շէնք մը կառուցելու արտօնագիր, ու մէկէ աւելի աղբիւրներու փոխանցմամբ՝ այդ շէնքը կրնայ օգտագործուիլ որպէս պանդոկ կամ գբօսաշրջային համալիր:

Այս խնդիրը չէ վրիպած Թիֆլիսի քաղաքացիական հանրութեան կիզակէտէն, ու մէկէ աւելի աքթիվիստներ եւ պատմական յուշակոթողներու պաշտպանութեան հարցերով զբաղող աքթիվիստներ իրենց բողոքի ձայնը բարձրացուցած են կատարուածին վերաբերեալ, կիսաւեր եկեղեցին կից շինարար-

րական աշխատանքներ սկսելու իրողութիւնը համարելով անընդունելի:

Նոյնը կատարած է Վրաստանի թեմի հայոց Առաջնորդարանը, որ պաշտօնական նամակներ յղած է պետական մարմիններուն, սակայն մինչեւ այս պահը այդ նամակները կը շարունակեն մնալ անպատասխան:

Թիֆլիսի մէջ գործող «Ալիք Մէտիս» (www.aliq.ge) հայկական լրատուական գործակալութիւնը իր կայքին վրայ տեղադրուած լուրով մը փոխանցած է նաեւ, որ անցեալ 5 Դեկտեմբերէն ի վեր սկիզբ առած շինարարութեան գլխաւոր պատասխանատուն է Իրակլի Կեսիլիան

ՁԵՐ ԴԵՄՔԻՆ ՁԵԸ ԻՆՉ Կ'ՈՍԷ ՁԵՐ ՄԱՍԻՍ

Դէմքին ձեռքը կրնայ բացառապէս տեղ անձի տեսակը, պատմել անոր կեանքի սկզբունքներուն մասին: Թէեւ մարդոց մեծամասնութիւնը ունի համադրուած դիմաձեւ, օրինակ, կլոր եւ քառակուսի համադրութիւն, այնուամենայնիւ, կան մարդիկ, որոնց դիմաձեւը յստակ կը հասկնուի:



Ուղղանկիւն դիմաձեւ: Այս դիմաձեւով մարդիկ ունին քառակուսի ձապատ եւ կզակ: Անոնք կը տարբերին նախանձեղի տրամաբանութեամբ եւ շատ լաւ մտածողութեամբ, սակայն շատ ջանք կը գործադրեն իրենց մտորումներուն մէջ: Իբրեւ կանոն անոնք կը ծրագրեն քայլերը եւ հազուադէպ կը խօսին իրենց զգացումներուն մասին: Մշտապէս յառաջացողներքին յարուածութիւնը հանելու համար անոնք կ'աշխատին ջանասիրաբար:

բաներու մասին եւ կրնան ըսել այնպիսի բառեր, որոնք անպայման հաճելի կը թուին խօսակիցին: Անոնք կը տրամադրեն իրենք իրենց հանդէպ, սակայն շատ կեդրոնացած են անթերի երեւնալու ցանկութեան վրայ:

Կլոր դիմաձեւ: Այսպիսի դիմաձեւը կը բնորոշուի այտուակրէն ներքեւ թմբիկի այտերով: Ատիկա ցոյց կու տայ, որ անձնաւորութիւնը բարի է, այլ մարդոց հետաքրքրութիւնները կը դասէ իր նախասիրութիւններէն վեր: Այդ պատճառով, այսպիսի մարդիկ սովորաբար կ'ենթարկուին ինքնահաւաստի ետասէրներուն:

Քառակուսի դիմաձեւ: Ոչ մեծ դէմք՝ լայն ճակատով եւ կզակով: Այսպիսի մարդիկ շատ համբերատար են եւ լի խանդավառութեամբ:

Աղամանդի ձեւ: Սուր ձապատ եւ քիթը շեղանկիւն կը ստեղծեն երկարաւուն այտուակրերու օգնութեամբ: Այդպիսի մարդիկ կը սիրեն իրավիճակը իրենց հակողութեան տակ վերցնել: Անոնք կեդրոնացած են մանրուքներու վրայ, ինչի շնորհիւ անոնք կ'ըլլան լաւ աշխատողներ: Յստակ են իրենց խօսքերուն մէջ եւ լաւ կապ կ'ունենան այլ մարդոց հետ:


Սրտանման դիմաձեւ: Այս տիպի մարդիկ ունին լայն ձապատ եւ նեղ կզակ: Անոնք ունին անհավասար կաններքին ուժ եւ շատ յամառ են: Այդ ներքին ուժը զանոնք կը տանի դէպի դրուած նպատակներու իրականացում: Անոնք ունին ուժեղ ներքին ճայն:

Հաւկիթաձեւ դիմաձեւ: Այս տիպի մարդիկ ունին երկարաւուն դէմք: Անոնք գիտեն բոլոր ճիշդ

Տանձանման կամ եռանկիւն դիմաձեւ: Այս տիպի մարդիկ ունին նեղ ձապատ եւ լայն ներքին ծնօտ: Անոնք կ'ուզեն ըլլալ գլխաւորը: Այս տեսակի մարդիկ շատ յաճախ յաջողակ կ'ըլլան: Հնարաւորութիւններու սահմաններուն մէջ լաւ խնամուած ըլլալ:

ԻՆՉՊԵՍ ԼՐԱՅՆԵԼ ՎԻԹԱՄԻՆ D-Ի ՊԱԿԱՍԸ ՁՍՐԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Ձմրան ընթացքին մեր մարմինը կը տառապի արեւային «սննդակարգէ» եւ մենք կ'ունենանք վիթամին D-ի պակաս, գորտարուան միւս եղանակներուն կը ստանանք արեւէն:



Վիթամին D-ի շնորհիւ քալսիտը, ֆոսֆորը, վիթամին A-ը, մակնեցիտը եւ այլ օգտակար նիւթերը, որոնք կը պարունակուին սնունդի մէջ, կը ներծծուին մարմնի մէջ բարակ աղիքի միջոցով: Այդ պատճառով այս վիթամինին պակասը կը խանգարէ նաեւ օգտակար տարրերու ներթափանցումը մեր մարմնին մէջ:

սնունդ՝ ինչպէս ձուկ եւ ծովային ուտելիքներ: Իւրոտ ձուկը վիթամին D-ի հիանալի աղբիւր է:

Կաթնեղէնը: Մէկ գաւաթ կաթը կը լրացնէ վիթամին D-ի օրական պահանջը: Նաեւ կարելի է օգտագործել պինդ տեսակի պանիր, կարագ:

Հաւկիթը: Տապկուած հաւկիթը ոչ միայն ամենահասարակ եւ յայտնի նախաճաշն է, այլ նաեւ ամենահամեղն ու օգտակարը: Առաւօտեան տապկուած հաւկիթը կ'ապահովէ օրական պահանջի 10%ը, որ կայ անոր դեղնուցին մէջ:

Սուճիկը: Վիթամին D-ն սուճիկի մէջ կ'արտադրուի արեւու ճառագայթներուն շնորհիւ: Անոր քանակը չի փոխուի սուճիկի պատրաստման եղանակէն:

Բուսական սնունդ. Յատկապէս օգտակար են ազատքեղը, եղինջը, աւուրտը, սոյան:

Վիթամին D-ն նաեւ կը կարգաւորէ նիւթափոխանակման գործընթացները, կը խթանէ որոշ հորմոններու աշխատանքը եւ շատ կարեւոր է ոսկորներու աճի, սրտի աշխատանքի, արեան մակարդեղիւթեան համար: Վիթամին D-ն նաեւ կը կարգաւորէ ջղալին համակարգի աշխատանքը:

Ինչպէ՞ս լրացնել այս կարեւոր վիթամինին պակասը. Պարզ է, որ վիթամին D-ի հիմնական աղբիւրը արեւն է եւ անոր պակասի պարագային պէտք է գտնել այլ ընտրանք: Ձմրան ընթացքին, երբ արեւոտ է, աշխատեցէք երկար գջօսնել: Վիթամին D-ի յառաջացման կը նպաստեն նաեւ օղային եւ ջրային լոգանքները եւ մերսուտը:

Շատ կարեւոր է նաեւ ձմրան ընթացքին օգտագործել այս վիթամինի պարունակութեամբ

ՅՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԳԵՏՆԱԽՆՁՈՐԸ Կ'ԱԻԵԼՑՆԷ ՅՐԻՆԵՐՈՒ ՇԱՔԱՐԱԽՏԻ ՅԱՌԱՋԱՑՄԱՆ ԿՏԱՆԳԸ

Գիտնականները կը վկայեն, որ յղութեան ընթացքին մեծ չափով գետնախնձորի օգտագործումը կրնայ բարձրացնել յղիներու շաքարախտի յառաջացման վտանգը:

Յղիներու շաքարախտը յղութեան ընթացքին կը զարգանայ կրկնուր մէջ 2-3 տոկոսի մօտ եւ կրնայ բացասաբար ազդել փոքրիկի զարգացման վրայ: Ամէնէն յաճախ յղիներու շաքարախտի ախտանիշները կ'անհետանան ծննդաբերութենէն ետք:

Գիտնականները վերլուծած են 21.000 յղութիւններու ընթացքը, որոնց վերաբերեալ տուեալները հաւաքուած էին 1991-2001-ին: Փորձարկման մասնակիցներէն ոչ մէկը տառապած է քրոնիկ որեւէ հիւանդութենէ:

Գիտնականները վերլուծած են յղութեան ընթացքին ապագայ մայրերու սնունդի բնոյթը, առանձին ուշադրութիւն դարձնելով այն բանին,

թէ կրկնուր որքան յաճախ օգտագործած են գետնախնձոր՝ փրէշ, տապկուածի, խորովածի, եփածի եւ չիփսի տեսքով: Անոնք հաշուի առած էին նաեւ այնպիսի գործօններ, ինչպէս ֆիզիքական աշխույժութեան մակարդակը, տարիքը, ճարպակալումը:

Պարզուած է, որ այն կրկնուր մօտ, որոնք շաքարը աւելի քան հինգ չափ գետնախնձոր կերած էին (մէկ չափաբաժինը համապատասխանած էր 100 կրամի), յղիներու շաքարախտը զարգացած էր 50 տոկոսով աւելի յաճախ, քան անոնց մօտ, որոնք քիչ կերած էին գետնախնձոր:

Գիտնականները կը կարծեն, որ այդ բարդութեան ի յայտ գալու պատճառը գետնախնձորին մէջ պարունակուող օսլան է, որ արեան մէջ կտրուկ կերպով կը բարձրացնէ շաքարի մակարդակը:

ԸՆՏԱՆԻՔՆ ԱՍՈՒՐ Է, ԵԹԷ ԱՅՆՏԵՂ ՁԱՐԳԱՆԱԼՈՒ ՄԻՏՈՒՄ ԿԱՅ

Ամուր հիմերով ընտանիք ստեղծելու գլխաւոր նախապայմաններէն մէկը այն է, որ նոր կազմաւորուող այդ «համակարգը» բարենպաստ միջավայր ըլլայ անդամներէն իւրաքանչիւրի անձնական զարգացման համար: Յիշենք, որ ընտանիքը սերունդը շարունակելու գործիք է: Նման մտածողութեան արդիւնքն է, որ կը հանդիպինք համատեղ կեանքի այդքան չյաջողած դէպքերու: Եթէ մտածենք ընտանիքի մասին կեանքի նոր փուլի անձնական զարգացման տեսանկիւնէն, միանգամայն պիտի առաջնորդուինք այլ սկզբունքներով՝ ընտանիք ստեղծելու ընթացքին:

Ժուլիլը օր մը գլուխ պիտի բարձրացնէ: Ի հարկէ, պիտի հարցնէք, թէ ուր մնաց սէրը այս դատողութիւններու կողքին: Ձոյգերու մեծ մասը այդպէս ալ կը վարուի. կը սիրահարուին եւ կ'ամուսնանան, որովհետեւ «չեն կրնար ապրիլ առանց մէկը միւսին»: Բայց շատ շուտով պարզ կը դառնայ, որ միայն սէրը քիչ է: Երիտասարդ ընտանիքը կը բախի կենցաղային խնդիրներու, կը մեծնան յաւակնութիւնները իրարու հանդէպ, եւ նոր միայն ի յայտ կու գան այն անհամատեղելիութիւնները, որոնք կը քոյարկէր «սէր»ը: Ընտանիք պէտք է կազմել անոր հետ, որ կ'երթայ նոյն ուղղութեամբ, որով դուք կ'երթաք, ի դէպ՝ նոյն արագութեամբ:

Երբ ընտանիքը նպաստաւոր միջավայր կը դառնայ անձի անհատական զարգացման համար, կարելի կ'ըլլայ նաեւ «սիրել»ը, եւ չի ստեղծուի իրավիճակ, երբ «հոգիդ բան մը կ'ուզէ, բայց պարտադրուած է հաշտուելու եղածին հետ»: Ատիկա կը քայքայէ նախ մարդը, յետոյ՝ անխուսափելիօրէն նաեւ այն միջավայրը, որ «կը ճզմէ» գինք, այս պարագային՝ ընտանիքը:

ՉԱՄԻՉԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՐԵԼԻ Է ՄԱՔՐԵԼ ԼԵԱՐԴԸ

Չամիչը արժէքաւոր ուտելիք է ջղային համակարգը հանգստացնելու եւ քունը բարելաւելու համար:

Չամիչի իւրաքանչիւր հատիկ, հակառակ իր փոքրիկ չափին, կը պարունակէ արժէքաւոր, անհրաժեշտ ու մարմնի համար չափազանց առողջարար նիւթեր:

Չամիչի օգտակար յատկութիւնները կը բացատրուին թարմ խաղողի առողջարար ըլլալու փաստով, սակայն արժէքաւոր նիւթերը անոնց մէջ 10 անգամ աւելի շատ են, քան թարմ խաղողի հատիկներուն մէջ: Չամիչը կ'ամրապնդէ ջղային համակարգը ու կը բարելաւէ քունը՝ շնորհիւ վիթամին B-ի խումբերու մեծ քանակին: Անիկա կարեւոր է օգտագործել իբրեւ հանգստացնող միջոց, որ կը հանէ մարմնի լարուածութիւնն ու յոգնածութիւնը:



Լեարդը մաքրելը չամիչի միջոցով ամենաարդիւնաւէտ միջոցներէն մէկն է մարմնի բուժման ու քրոնիկ հիւանդութիւններէն ազատելու համար, չէ՞ որ նոյնինքն մարմնի աւելորդ նիւթերով ծանրաբեռնուածութիւնը կը խանգարէ անոր ինքնակերականգնման աշխատանքը, ինչպէս նաեւ զգալիօրէն կը նուազեցնէ դեղորայքի ու աւանդական բժշկութեան բաղադրատոմսներու ազդեցութիւնը:

«ՅՈՒՐԻՍ. ԵՐԱՋԻՐ . ՍԻՐԻՐ . ՅԱԲԱՏԱ» - ՅԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՎԿԱՅՈՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԳԻՒՄՐԻՈՒՄ



Գիւմրիի Վարդան Աճեմեանի դրամատիկական թատրոնում Մայիսի 21-ին տեղի ունեցաւ «Հոգիս» բազմաժանր ներկայացումը՝ նուիրուած Գիւմրիի ԹՈՒՄՕ-ՀԲԼՄ կենտրոնի երկրորդ տարեդարձին: «Հոգիս»-ը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԼՄ), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Նորքի Հայրորդաց տան, Թումո ատեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի եւ «Փիւնիկ» մարդկային ռեսուրսների զարգացման համահայկական հիմնադրամի համագործակցութեան արդուներն է:

«Հոգիս» ներկայացման Գիւմրիի առաջնախաղը իրական հաւաքական ձգտում էր՝ ներկայացնելու մի մշակույթ եւ մի ազգապատկեր: Աւանդական հայկական արուեստը, ժամանակակից ակրոբատիկան ու նորագոյն տեխնոլոգիաները միաձուլող պարային երաժշտական այս բացառիկ ներկայացումը բեմականացուեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ՀԲԼՄ-ի Նորքի Հայրորդաց տան սաների եւ Թումոյի Թմբաթա եւ Pyramidz երաժշտական խմբերի մասնակցութեամբ:

Ներկայացումը ՀԲԼՄ-ի 110-ամյակի առիթով առաջին անգամ հանդիսատեսին է ներկայացուել 2016թ.-ին Նիւ Եորքի Պրոդուցի Սիթի Սենթր թատրոնում, այնուհետեւ՝ Երեւանի Ալ. Սպենդիարեանի անվան օփերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում: ՀԲԼՄ Հայաստանը ձեռնարկում է «Հոգիս»-ի ներկայացումը նաեւ Ստեփանակերտում:

«Շատերն էին խանդավառուած Նիւ Եորքի եւ Երեւանի ներկայացումներով, իսկ «Փիւնիկ» համահայկական հիմնադրամը, յանձինս իր պատուոյ նախագահ Գաբրիել Ջեմբերջեանի, օժանդակեց «Հոգիս»-ի Գիւմրիի, իսկ շուտով նաեւ Ստեփանակերտի ներկայացումներին», - նշեց ՀԲԼՄ Հայաստանի նախագահ եւ ՀԲԼՄ կենտրոնական վարչութեան անդամ Վազգէն Յակոբեանը: «Ճիշտ է, ՀԲԼՄ-ի նպատակն է պահպանել հայ մշակույթն ու արուեստը, սակայն մենք նաեւ հաւատում ենք, որ բաւարար չէ միայն հինը, դասականը պահպանելն ու վերարտադրելը, այլ նոյնչափ կարեւոր է շարունակել ներառել, ստեղծագործել եւ հայ արուեստը հասցնել 21-րդ դար: Այդ իսկ տեսլականով ստեղծվեց «Հոգիս»-ը. հայ հոգին եւ հայկական արժէքները փոխանցելու հանդիսատեսին»:

«Ողջունում եմ «Հոգիս»

ներկայացումը աւելի լայն շրջանակներին հասցնելու ՀԲԼՄ-ի նախաձեռնութիւնը: Գիւմրիի թատերասէր հասարակութեան այնչափ ջերմ վերաբերմունքն այն իրական գնահատանքն է, որ ոգեւորում է նոր ստեղծագործութիւնների», - ասաց «Հոգիս» ներկայացման բեմականացման գծով տնօրէն Գրիգոր Խաչատրեանը:

«Մեր ստեղծած նոր խօսքն ու արտայայտչաձեւը հասկացուեց եւ ընդունուեց նաեւ Գիւմրիում: Արուեստի տարբեր բնագաւառներում աշխարհահռչակ արուեստագէտներ տուած մշակութային մայրաքաղաքում հաջողութիւն ունենալը, կարծում եմ, մեծագոյն յաղթանակ է հայ արուեստագէտի համար», - ներկայացումից յետոյ իր ոգեւորութիւնը կիսեց «Հոգիս»-ի բալետ-մայսեր Արման Ջուլհակեանը:

«Հոգիս»-ը Գիւմրիում ցուցադրելու ՀԲԼՄ-ի շարժառիթն էր հարստացնել գիւմրեցիների մշակութային կեանքն ու նրանց մասնակից դարձնել ԹՈՒՄՕ-ՀԲԼՄ կենտրոնի երկրորդ տարեդարձի տօնակատարութեանը: 2015-ի Մայիսին, Թումո-ՀԲԼՄ համագործակցութեամբ եւ «Շանթ» հեռուստաընկերութեան նախաձեռնութեամբ Գիւմրիում բացուած թուով երրորդ Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնն իր գործունէութեան երկու տարիների ընթացքում բազմաթիւ ձեռքբերումներ է ունեցել: Կենտրոնի 2000-ից աւելի ակտիւ ուսանողներից 1000-ը միացել են Թումոյին վերջին տարուայ ընթացքում՝ տարածքի ընդլայնման եւ սարքաւորումների համալրման շնորհիւ: Ուսանողները տարուայ ընթացքում մասնակցել են աւելի քան 500 մշտական դասընթացների եւ յատուկ աշխատարանների: Թումոյի ծրագրի մէջ աւելի մեծ քանակով գիւմրեցի ուսանողներ ներգրաւուելու եւ նրանց ընդլայնուած հնարաւորութիւնով լի առօրեայ ապահովելու նպատակով մօտ ապագայում նախատեսուած է Թումո Գիւմրիի նոր շէնքի քաղաքի առաջին թատրոնի վերականգնումը:

Տարիներ ի վեր ՀԲԼՄ-ն իր մարդասիրական եւ զարգացման ծրագրերն ուղղել է Գիւմրիի ու գիւմրեցիների վերականգնմանն ու զարգացմանը: Միութիւնն այժմ ակտիւորեն մասնակցում է Գիւմրիի պատմամշակութային եւ քաղաքաշինական միջավայրի պահպանմանն ու զբօսաշրջութեան զարգացմանն ուղղուած ծրագրերի նախագծման աշխատանքներին:

ՍԻՐԵԼԻ ՋԵՄԻԿ ՄԱՅՐԻԿԻ ՄԱՅՐՈՒԱՆ ԲԱՌԱՍՆՕՐԵԱԿԻ ՏԵՈՒՐ ԱՌԻԹՈՎ

Երբ մահուան գոյժ են տեղեկացնում, տիրում ենք, ցաւում ենք, որ մէկ հոգի մեզանից պակասեց, եթէ կեանքից հեռացողը հայ մայրիկ է նրա վիշտը աւելի մեծ է գաւակների համար, քանի որ տան օջախում պահուած է մայրական սէրը, գուրգուրանքն ու փայփայանքը, սրտցաւութիւնը, նուիրուածութիւնը, շինիչ ու կազդուրիչ խրատն ու յորդորը, սրտերը միացնող ու ջերմացնող շունչն ու ոգին: Մեր հայկական կեանքում մայրն ամենաբարձր գերակայութիւնն ունի շնորհիւ Հայաստանին ու հայ ժողովրդին նուիրելով գաւակներ, նա այդ իր անմար սիրոյ ատրուշանում պահում եւ պաշտպանում է հայ ազգի յաւերժական երթի ճամբան, ահա մօր սիրոյ առաքելութեան եւ առաքինութեան համար ծով գրականութիւն է յօրինուած ու ձօնուած մեր գրողների եւ բանաստեղծների միջոցով:

Այսպէս ցաւալիօրէն ապրիլի 26-ի չորեքշաբթի օրը դարձաւ լաց ու կոծի օր, թախիծով ու կսկիծով համակուած անփոխարինելի կորուստ Աբրամեանց ընտանիքի համար: Սիրելի մայրիկը ծերութեան եւ հիւանդութեան պատճառով հրաժեշտ տուեց կեանքին էն աշխարհում միանալով իր ամուսնուն՝ Սարգսին, մահացած մայիս 9, 1998 թիւ:

Սիրելի մայրիկը՝ Ջեմիկ Յակոբեանց ծնուել էր 1930-ի Մայիս 15-ին Իրանի Մարաղա քաղաքում: Նա ամուսնանում է 1950-ին քսան տարեկանում, երիտասարդական թուվուոն համակ սիրով տոգորուած տարիքում Սարգիս Աբրամեանցի հետ, իրենց սիրոյ պտուղը արգասաւորուած է երկու տղայ եւ երկու աղջիկ գաւակներով՝ Ժորժ, Նորիկ, Քաթրին եւ Ժանէթ: Ամուսինները՝ Ջեմիկ եւ Սարգիսը իրենց համերաշխ եւ սիրալիկ կեանքով, աշխատանքով՝ Ջեմիկը որպէս տնտես եւ Սարգիսը որպէս վարպետ արհեստաւոր բարեկեցիկ կեանք են ստեղծում իրենց գաւակների համար, հոգալով եւ հսկելով նրանց ուսմանը, ապա դասաւորելով ու կարգադրելով գաւակների



ամուսնական կեանքը: Չորս գաւակներն ունեն իրենց ընտանիքները:

Սիրելի Ջեմիկ Մայրիկը բախտաւոր կին էր, նա իննը թոռների եւ վեց ծոռների տատիկ էր, սիրուած եւ սիրում էր բոլորին հաւասարապէս, արդարեւ նա վայելում էր բոլոր գաւակների, թոռների եւ ծոռների սէրն ու յարգանքը: Սիրելի մայրիկի եւ հայրիկի հոգատարութեամբ ու բժախնդրութեամբ խնամած ծառերը քաղցր պտուղներով արդիւնաւորուած ուրախութեան օրինակելի կեանքի քաջալերանք են: Սիրելի մայրիկի վերջի մի քանի տարին դժուար եղաւ անգամներ հիւանդութեան պատճառով, նա այդ վիճակում բոլոր գաւակների ուշադրութեան ներքոյ էր գտնուում ի մասնաւորի Քաթրինի, որը մշտական մօր մօտ էր, նրան ամէն տեսակ խնամք ու հոգատարութիւն ցոյց տալով:

Նա գնաց դէպի հանդերձեալ դրախտային կեանք իր գաւակներին աւանդելով՝ սէր հաւատք, ազնւութիւն, բարութիւն եւ նուիրուածութիւն, առաքինի կեանքի իսկական արժէքները:

Սիրելի մայրիկ քո գաւակները մշտական կը կարօտեն քեզ եւ քո լիշատակը միշտ պայծառ կը պահեն իրենց սրտերում ինչպէս արեւը ջերմ ու լուսաւոր:

Ռ. Կորիւն

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

ՄԱՇՏՈՑ ԳՈՒԼԵԾԻ 25-ԱՄԵԱԿ

Շարունակուած էջ 14-էն

Անճելուի Գաւառի Բանտերու Յանձնախումբին, ամերիկեան Rotary Club մարդասիրական կազմակերպութեան Ա.Մ.Ն. Արեւմտեան Շրջանի նախագահը եղած է: Այս կազմակերպութեան միջոցաւ կազմակերպած է 28 յաջորդական տարեկան համագումարներ, նուիրուած՝ աշխարհի խաղաղութեան: Գնահատուած է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներու կողմէ, Ա.Մ.Ն. 4 նախագահներէ և 32 համալսարաններէ:

Կազմակերպած է 25 անգամ դէպի պատմական Հայաստան ուխտագնացութիւններ:

Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան եղաւ առաջին ազգային գործընկերը, որ Հայաստանի 1988-ի երկրաշարժի տարին, մեր գաղութի պատմութեան մէջ եղաւ առաջին թելթոն կազմակերպողը՝ հայրենի մեր ժողովուրդին վերբերը ամօքելու համար: Անկէ առաջ և անկէ ետք բազմաթիւ ծրագիրներով կրթական և մարդասիրական աշխատանքներով իր նպաստը բերած է մեր յաւերժական Հայրենիքին:

Մեր սիրելի մեծարեալը օրական 24 ժամ բանող, շարժման մէջ եղող, արտադրող էակ մըն է: Աստուածապարգեւ իր ողջ կեանքը եղած է շաժուճ և աշխատանք ի փառս Աստուծոյ

և մեր ժողովուրդին:

Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան գրասեղանի առջեւ ըլլալ կամ՝ դասարանի մէջ, կամ՝ ինքնաշարժի դէկին առջեւ, մտքով ու մարմնով մեղուաջան աշխատանքի մէջ է:

Հոգեւոր կեանքը մեր սիրելի մեծարեալին կեանքի Ալֆան և Օմեկան է: Անոր համար ամէն ինչ որ կ'ընէ և կ'ըլլայ միշտ Աստուծոյ փառքին համար է:

Ամուսնացած է նոյնքան հոգեւոր թանկագին անձնաւորութեան մը, ազնուափայլ էակի մը, հրեշտականման տիպար՝ Տիկին Անճելա Տոբթորեան-Տէր Եղիայեանի հետ և ունին հոյակապ երկու մանչ զաւակներ, որոնք ամուսնացած են և իրենց ծնողներուն պարգեւած են երկու թոռնիկ: Ոչ միայն իր ընտանիքը, այլ նաեւ մենք շատ բախտաւոր կը զգանք, որ մեր կեանքին մէջ ճանչցած ենք այս սքանչելի անձնաւորութիւնը, վայելած այս իսկապէս քրիստոնեայ հայուն բարեկամութիւնը և լսած ենք անոր բազմաթիւ ելոյթները հեռատեսիլի կամ ամպլոններու վրայէն:

Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան տակաւին իր ստեղծագործական իմաստուն տարիքին մէջ է, տակաւին շատ տալիք ունի իր Աստուածատուր տաղանդէն: Իրեն կը մաղթենք կենսաոողջ օրեր և նորանոր յաջողութիւններ, իսկ Մաշտոց Գոլէճին ալ յարատեւ և լուսաշող ամեակներ:

«ՅԱՅԱՍԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԻՄՆԱԴՐԱՍ

Շարունակուած էջ 16-էն

միակ դպրոցն է, որ հանրակրթականին գուզահեռ յատուկ կրթութիւն կ'ապահովէ նախադպրոցական, ներառական եւ խօսքի ու լսողական խանգարումներ ունեցող աշակերտներու համար: Դպրոցը ունի 395 սան: Աշխատանքներու աւարտին դպրոցը պիտի գալ համալրելու Հիմնադրամին կողմէ Ստեփանակերտի մէջ արդիականացուած կրթօճախներուն շարքը:

Օրուան ընթացքին պատուիրակութիւնը այցելեց նաեւ Ապրիլին Ստեփանակերտի մէջ բացուած նորակառուց ժամանակակից ուռուցքաբանական կեդրոն, որ կեանքի կոչուած է ֆրանսահայ Ռիշար Ծհաննէսեանի հովանաւորութեամբ (Արցախի Հանրապետութեան կառավարութեան համատեղ նիւթական աջակցութեամբ):

Շուշիի մէջ պատուիրակութիւնը ներկայ գտնուած է քաղաքի մշակոյթի եւ երիտասարդութեան կեդրոնի երկրորդ մասնաշէնքի (մեծ դահլիճի) բացման արարողութեան: Անիկա վերակառուցուած է Արցախի կառավարութեան միջոցներով եւ Հիմնադրամին վերահսկողութեամբ: Նոր մասնաշէնքը, ուր տեղակայուած է 368 տեղ ունեցող դահլիճը, հանդերձարաններ եւ օժանդակ

սենեակներ, նախատեսուած է թատերական ներկայացումներու եւ բազմաբնոյթ այլ ձեռնարկներու համար: Այսուհետեւ, իր գործունէութիւնը այստեղ պիտի ծառայէ նաեւ խանդամիրեանի պետական թատրոնը: Կեդրոնի առաջին մասնաշէնքին մէջ, որ 2012-ին վերակառուցուած է Հիմնադրամին կողմէ, Թորոնթոյի «Հայաստան» հիմնադրամին հովանաւորութեամբ, կը գործեն արուեստի տարբեր խմբակներ, ինչպէս նաեւ գանատահայ բեմադրիչ Ատոմ Էփրեանի անուան տիկնիկային թատրոնը:

Այսուհետեւ, պատուիրակութիւնը այցելեց Քրոսնիի մէջ Յարութիւնեաններու բազմանդամ ընտանիքին, որոնք արդէն մէկ տարի է, որ Հիմնադրամին հովանաւորութեամբ կառուցուած առանձնատան տէրերն են: Արդէն երրորդ տարին է, հաւաքագրուած գումարներով եւ նպատակային յատկացումներով, Հիմնադրամը առանձնատուներ կը կառուցէ արցախաբնակ հինգ եւ աւելի երեխայ ունեցող ընտանիքներու համար: Ներկայիս 16 տուն արդէն յանձնուած է շահաւուներուն, 15-ը կառուցման փուլի մէջ է: Արցախի մէջ, նիւթական տարբեր միջոցներով կառուցուող տուներէն Հիմնադրամին կառուցած առանձնատուները կ'առանձնանան ամբողջական կահաւորումով եւ կենցաղային իրերու առկայութեամբ:

ՎՐԱՍԱՆԻ ՇԱՄՈՐՈՒՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Շարունակուած էջ 16-էն

անունով վրացի գործարար-շինարար մը, սակայն գործակալութեան աշխատակից հայ լրագրողներուն՝ տուեալ անձին հետ կապ հաստատելու բոլոր փորձերը մնացած են ապարդիւն:

Գաղտնիք ալ չէ նաեւ, որ վրացական շինարարական կազմակերպութիւնը իր այս արարքով եւ բաւական կոպիտ ձեւով կը խախտէ Վրաստանի Պատմական եւ Մշակութային Յուշարձաններու Պահպանութեան Վարչութեան կողմէ բաւական երկար ժամանակէ ի վեր գործող օրէնքը, ըստ որուն, որեւէ պատմական յուշարձանի կամ եկեղեցու մերձ ըլլալիք շինարարական կամ նորոգութեան աշխատանք պէտք է կատարուի այդ պատմական վայրէն բաւական հեռու, այդպիսով վայրը գերծ պահելով շինարարութեան անմիջական ցնցումներուն հետեւանքով ըլլալիք փլուզման վտանգներէն:

Այս բոլորին դիմաց մտահոգութեան տեղիք կու տայ Վրաց Ուղղափառ Եկեղեցու լուսիւնը, որուն հոգեւոր առաջնորդները կամ կրօնական պատասխանատուները կը նախընտրեն ոչինչ ըսել հայութեան համար կարեւոր արժէք ներկայացնող ամբողջական փլուզման վտանգին առաջ կանգնած Շամխորեցոց կիսաւեր եկեղեցու մասին:

Ու թէեւ ճիշդ չէ, որ այս հարցին մէջ ալ փորձենք «դաւադրական տեսաբանութեան» մասին խօսիլ, բայց պատկան մարմիններուն եւ յատկապէս Վրաց Եկեղեցու վերաբերմունքը եւ նոյնիսկ խնդիրին վերաբերեալ անոնց որդեգրած «պաղ» կամ չէզոք դիրք որդեգրելը կրնայ առիթ հանդիսանալ հայկական այլ եկեղեցիներու նոյն տիպար ճակատագրին ենթարկուելուն:

Վիրահայոց Թեմի Առաջնորդ Տ. Վազգէն եպս. Միրզախանեանին հետ իմ ունեցած գրոցի ընթացքին սրբազան հայրը կարեւոր խնդիրի մըն ալ անդրադարձաւ. ան ըսաւ, թէ իր նախաձեռնութեամբ կը գործէ յատուկ մարմին մը, որուն հիմնական աշխատանքն է զբաղիլ հայկական կիսափուլ կամ «վիրաւոր» վիճակի մէջ գտնուող եկեղեցիներուն վիճակով:

Գաղտնիք չէ, որ նման վերանորոգչական աշխատանքներ կը կարօտին մեծագումար դրամական յատկացումներու, որոնց ապահովումը բաւական «թանկ հաճոյք» է Վրաստանի հայ համայնքին համար: Այստեղ պէտք է նոյնպէս նշել, որ Թիֆլիսի առաջնորդանիստ Սուրբ Գէորգ եկեղեցին ամբողջութեամբ

վերանորոգուեցաւ (վերանորոգման աշխատանքները աւարտեցան 2012-ին) եւ այդ գործընթացին մասնակցութիւն բերաւ մոսկուաբնակ հայ գործարար Ռուբէն Վարդանեանի հիմնադրած եւ Հայաստանի մէջ գործող «IDEA» հիմնադրամը, որ եկեղեցու վերանորոգման համար տրամադրեց 10 միլիոն ամերիկեան տոլար:

Այստեղ հարկ է նշել, որ Հաւաքարի մէջ գտնուող Շամխորեցոց եկեղեցիէն բացի կան նաեւ Մուղնեցոց Սուրբ Գէորգ եւ Երեւանցոց Սուրբ Մինաս եկեղեցիները, որոնք նոյնպէս կը գտնուին անմխիթար վիճակներու մէջ եւ կարիք ունին անմիջական վերանորոգման, այլապէս կրնան ամբողջութեամբ փլուզուիլ:

Հայութեան պատմական յիշողութիւններու, սրբապաշտելու, տաճարներու, եկեղեցիներու եւ վանքերու կանգուն մնալու հարցը ազգային խնդիր է: Այս բոլորին մէջ կայ ոչ միայն քարեղէն այդ ամրոցները պահպանելու եւ վերանորոգելու հարցը, այլ կարեւորը՝ օգտակար, մեր ժողովուրդին համար պիտանի հանդիսացող կառույցներու վերականգնումն է:

Հեշտ է քարոզներ կարդալ ու ըսել, որ այս ինչ եկեղեցին, կամ այդ ինչ կառուցը կարեւոր են մեզի համար: Պէտք է շատ աւելի խորունկ հայեացքով քննել հարցերը ու նախընթաց զարգացման արդիւնքները:

Օրինակ մը տալու համար չիշեցնենք Տիարպէթրի (Տիգրանակերտ) Սուրբ Կիրակոս եկեղեցու պարագան, որ տարբեր հանգամանքներու բերումով այսօր դարձեալ ծանր վնասներու ենթակա է: Պիտի չհատապարտենք կամ սխալ պիտի չհամարենք այդ եկեղեցու վերականգնումը, սակայն իրականքը ունինք բարձրաձայն հարցում մը ընելու եւ ըսելու, թէ ինչքանով նպատակաշարժար էր այդ եկեղեցու վերանորոգումը, որ ատենօք մեծ խանդավառութիւն ստեղծեց մեզի համար, սակայն այսօր դարձեալ մասնուած է անմխիթար վիճակի մը: Ու այս առումով նաեւ յստակ է, որ նոյնիսկ եկեղեցական վայրերու կամ հայապատկան վանքերու հարցին առնթք մենք յստակ ծրագիր մը չունինք ու առաւելապէս մեր նուիրապետական աթոռներէն իւրաքանչիւրը կը գործէ իրարմէ անջատ եւ առանց համակարգուած գործելանոցի, այդպիսով ինչպիսի համընդհանուր շփոթի մը մէջ եւ մեր ժողովուրդին թանկ միջոցները (յաճախ) անտեղի եւ անօգուտ կերպով ի սպառ վատնելով:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենյակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

Մադրիդի «Ռեալը» 5 Տարի Անց Դարձեալ Հռչակուեց Սպանիայի Ախոյեան



Մադրիդի «Ռեալը» հինգ տարուայ դադարից յետոյ դարձեալ նուաճեց Սպանիայի ախոյեանի տիտղոսը (33-րդ անգամ)՝ առաջնութեան վերջին տուրում հիւրընկալուելիս 2:0 հաշուով պարտութեան մատնելով «Մալազային»։ Աչքի ընկան պորտուգալացի Կրիշտիանու Ռոնալդուն եւ ֆրանսացի Քարիմ Բենզեման։

Ֆրանսացի մարզիչ Զինեդին Զիդանի գլխավորութեամբ թիմն առաջին անգամ դարձաւ Պրիմերայի յաղթող։ Նախորդ անգամ «Ռեալը» ախոյեանութեան էր հասել պորտուգալացի Ժոզէ Մուրինիոյի գլխավորութեամբ։ Նախորդ երկու առաջնութիւններում Արքայական թիմը դարձել էր փոխախոյեան (ընդհանուր՝ 23 անգամ)։

Այս առաջնութիւնում «Ռեալը» վաստակեց 93, «Բարսելոնան»՝ 90 միաւոր եւ վայր դրեց ախոյեանութիւնը։ Կատալոնական ակումբը վերջին տուրում տանը կամային յաղթանակ տարաւ «էլչբարի» նկատմամբ՝ 4:2: զբաղեցրեց 2-րդ տեղը։

Առաջնութեան լաւագոյն ումբարկուն 37 կոլով Լիոնել Մեսսին է։

Եուվենթուսը Դարձաւ Իտալիայի Ախոյեան

Թուրինի Եուվենթուսը նուաճեց Իտալիայի առաջնութեան ախոյեանի կոչումը։ 37-րդ տուրում թուրինեան ակումբը 3-0 յաղթեց Կրոտոնէին, միաւորներ թիւը հասցրեց 88-ի՝ անհասանելի դառնալով մրցակիցների համար։



«Եուվենտուս»-ը 6-րդ անգամ անընդմէջ է նուաճում ախոյեանի կոչումը։

«Մանչեսթեր Սիթին» ու «Լիվերպուլը» Նուաճեցին Ախոյեանների Լիգայի Ուղեգրեր

Անգլիայի առաջնութեան վերջին տուրում «Մանչեսթեր Սիթին» 5:0 հաշուով յաղթեց «Ուոլֆորդին», «Լիվերպուլը» 3:0 հաշուով առիթ չտուեց «Միդլսբրոյին», «Արսենալը» 2:1 հաշուով հաղթեց «Էվերտոնին»։

«Մանչեսթեր Սիթին» 78 միաւորով գրաւեց երրորդ տեղը, «Լիվերպուլը» 76 միաւորով չորրորդն է, «Արսենալը» 75 միաւորով 5-րդն է եւ կը մասնակցի Եւրոպայի լիգային։

Ախոյեան «Չելսին» 5:1 հաշուով յաղթեց «Սանդերլենդին» եւ առաջնութիւնն աւարտեց 93 միաւորով, փոխախոյեան «Տոտենհեմը»՝ 86 միաւորով։ Երկրորդ տարին անընդմէջ Պրեմիեր լիգայի լաւագոյն ումբարկու դարձաւ «Տոտենհեմի» անգլիացի յարձակուող Հարի Քեյնը, որն այս տուրում երեք կոլ խփեց։ Լոնտոնեան թիմը 7:1 հաշուով յաղթեց «Հալ Սիթին»։ Քեյնն այս մրցաշրջանում խփեց 29 կոլ։

«Մանչեսթեր Եունայթեդը» ոչ հիմնական կազմով 2:0 հաշուով յաղթեց «Քրիսթալ Փելասին» եւ 69 միաւորով 6-րդն է։

Ռանոս. «Սպանական Լիգան Աշխարհի Ամենաբարդ Լիգան է»

Սպանական Պրիմերան աշխարհի լաւագոյն եւ ամենաբարդ լիգան է, այս տարի մրցակցութիւնը շատ սուր էր, ասել է ախոյեան հռչակուած Մադրիդի «Ռեալի» աւագ Սերխիո Ռամոսը։

«Շատ հաճելի յոյզեր ունեմ։ Ախոյեանական տիտղոսը պարգեւ է կայունութեան համար։ Մեր թիմն արժանի է այս ախոյեանութեան ամբողջ մրցաշրջանի ընթացքում ցուցադրած խաղի համար։ Առանցքային գործօնը կայունութիւնն է։ Ամէն խաղին պէտք է մօտենալ եզրափակիչի նման։ Մենք պահպանեցինք սառնարտութիւնը, երբ անհրաժեշտ էր եւ վերցրեցինք մեր միաւորները։ «Ռեալը» միշտ պայքարում էր մինչեւ վերջին վայրկեանը եւ վաստակել է այս տիտղոսը»,- Ռամոսի խաբը մեջբերում է AS-ը։

Մխիթարեանի Կոլը ճանաչուել է «Մանչեսթեր Եունայթըդ»-ի Տարուայ Լաւագոյն Կոլ



Ֆուտպոլի Հայաստանի ազգային թիմի անդամ եւ «Մանչեսթեր Եունայթըդ»-ի ֆուտպոլիստ Հենրիխ Մխիթարեանի կոլը ճանաչուել է «Կարմիր սատանաների» տարուայ լաւագոյն կոլ։

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ «Եունայթըդ»-ի 2016/17 մրցաշրջանի մրցանակաբաշխութեան ընթացքում Մխիթարեանը շեշտել է, որ չէր կարող սխալուել, քանի որ փոխանցում էր ստացել «Աստուց» (խմբ.-Չլատան Իբրահիմովիչ)։

Մխիթարեանը «Կարիճ» հարուածով կոլի հեղինակ էր դարձել 2016 թուականի Դեկտեմբերին՝ «Սանդերլենդ»-ի դէմ խաղում։

Սամբիստ Տիգրան Կիրակոսեանը՝ Եւրոպայի Ախոյեան

Մինսկում մեկնարկել է սամբոյի Եւրոպայի առաջնութիւնը, յայտնում է ՀԱՕԿ կայքը։ Մրցումային առաջին օրը մարզական սամբոյի 52 կգ քաշային կարգում Հայաստանի ներկայացուցիչ Տիգրան Կիրակոսեանը, եզրափակիչ գօտեմարտում 5:0 հաշուով յաղթելով ատրպէյճանցի Ազաիֆ Սամեդովին, նուաճեց Եւրոպայի ախոյեանի տիտղոսը։



Մարտական սամբոյում Յարութիւն Սարգսեանը (57 կգ) դարձաւ պրոնզէ մետալակիր, տեղեկացնում է Հայաստանի սամբոյի ֆեդերացիան։

Շուեդիան՝ Աշխարհի Ախոյեան



Տափօղակով հոկեյի տղամարդկանց աշխարհի առաջնութիւնն աւարտուեց է Շուեդիայի հաւաքականի յաղթանակով, որը նախորդ անգամ այս տիտղոսը նուաճել էր 2013-ին։ Գերմանիայի Քիոլն քաղաքում տեղի ունեցած եզրափակիչում շուեդները յետխաղեայ բուլիտներով 2:1 հաշուով առաւելութեան են հասել Գանատայի հաւաքականի նկատմամբ։ Հիմնական եւ լրացուցիչ ժամանակն աւարտուել է ոչ ոքի՝ 1:1։

Երրորդ տեղի համար խաղում Ռուսաստանի հաւաքականը 5:3 հաշուով պարտութեան է մատնել Ֆինլանդիայի թիմին։

Պորուսիա Տորթնուստ Գրաւեց 3-րդ Դիրքը

Գերմանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան վերջին՝ 34-րդ հանգրուանի մրցումներուն, 3-րդ դիրքը գրաւող «Պորուսիա Տորթնուստ» պէտք է անպայման յաղթէր Չեմփիլընգ Լիկի խմբակներու մրցումներուն մասնակցելու համար։ Խումբը իր դաշտին վրայ ընդունեց 8-րդ դիրքը գրաւող «Վերտէր Պրեմըն»ը եւ տարաւ դժուար յաղթանակ մը 4-3 արդիւնքով։ Արձանագրուած արդիւնքներուն հիման վրայ, առաջին երեք դիրքերը գրաւող խումբերը պիտի մասնակցին Չեմփիլընգ Լիկի խմբակներու մրցումներուն, մինչ «Հոֆենհայմ» պիտի մասնակցի նոյն մրցաշարքի գտումին, «Քէօլն» եւ «Հերթա Պերլին» պիտի մասնակցին Իւրոպա Լիկի մրցումներուն, որոնց պիտի միանայ «Այնթրախթ Ֆրանքֆորթ», որպէս բաժակի մրցաշարքի աւարտական հասած խումբ։